

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՅՑՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ՄՏԱՅՈՎ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿՈՎ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի Օսկանեանին ուղղուած նամակի մը մէջ, Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) մամուլի ազատութեան հարցերով ներկայացուցիչ Միկելո շարաշտի իր մտահոգութիւնը յայտնած է Հայաստանի լրատուական դաշտի վրայ տիրող իրավիճակի կապակցութեամբ, մասնաւորապէս՝ Գլխավոր ԳԱԱ հեռուստանկերութեան շուրջ զարգացող իրադարձութիւններու առթիւ:

«Հեռուստանկերութիւնը կրնայ փակուիլ իշխանութիւններու ճնշումներու արդիւնքով», - ըսուած է Հարաշտիի նամակին մէջ:

ԵԱՀԿ-ի բարձրաստիճան պաշտօնեան նաեւ անհանգստութիւն յայտնած է «Չորրորդ իշխանութիւն» թերթի գրասենեակի մուտքի մօտ տեղի ունեցած պայթիւնի առթիւ:

«Անկախ եւ ընդդիմադիր լրատուական միջոցներու դէմ վերջին ոտնձգութիւնները ու բռնութիւնները կը նպաստեն հայաստանեան լրատուութեան ոլորտին ներս վախի մթնոլորտի ձեւաւորման», - ըսած է Հարաշտի: «Ես համոզուած եմ, որ տեղական իշխանութիւնները կամայական որոշումներ չեն կայացնէր եւ կը դրսեւորեն կամք՝ փոխզինումային լուծումներ գտնելու համար»:

«Չորրորդ իշխանութեան» հետ կապուած միջադէպի կապակցութեամբ Հարաշտիի նաեւ կը յայտնէ. - «Ես կողմ կ'ընեմ հայաստանցի իրաւապահներուն պատժել մեղաւորները՝ ոչ միայն յանուն արդարութեան, այլեւ երկրէն ներս խօսքի ազատութիւնը պաշտպանելու համար»:

Միւս կողմէ Եւրոպայի Խորհրդի ինթերնետային հրատարակուեցաւ ֆրանսացի ճորձ Կոլոմբէի գեկոյցը Հայաստանի նախընտրական իրավիճակի մասին:

Կոլոմբէի Հայաստան այցելած ըլլալով Դեկտեմբերի առաջին օրերուն, մտահոգութիւն կը յայտնէ իշխանութիւններուն կողմէ ճնշման վարչական միջոցներու ընդդիմադիր թեկնածուներ ու անոնց կողմնակիցներուն դէմ օգտագործման կապակցութեամբ:

Եւրոպացի ներկայացուցիչը կ'անդրադառնայ նաեւ ոստիկանութեան կողմից Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցներուն դէմ կատարուող ահաբեկումներուն եւ որոշ պարագաներուն կիրառուող բռնութիւններուն:

## ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԿՈՉ Կ'ԸՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒՆ ՉԵՆԹԱՐԿՈՒԵԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՂ ՈՒԺԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հայաստանի առաջին նախագահ եւ նախագահութեան թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեան Դեկտեմբեր 25-ին հանդէս եկաւ քաղաքացիներուն ուղղուած կոչով՝ չենթարկուելու իշխանութիւններու կամայականութիւններուն եւ չարձագանգել իրաւապահ մարմիններու ապօրինի կանչերուն:

«Շուրջ երկու ամիս է, ինչ ողջ հանրապետութիւնով մէկ իմ կողմնակիցներին բանաւոր կերպով կամ հեռախօսագանգերով կանչում են ոստիկանատներ եւ անվտանգութեան ծառայութեան բաժանմունքներ, որտեղ նրանց ենթարկում են հոգեբանական ճնշման, ահաբեկումների եւ սպառնալիքների՝ ստիպելու համար, որ նրանք հրաժարուեն ինձ աջակցելուց եւ իմ կազմակերպած հանրահաւաքներին մասնակցելուց», - կ'ըսէ Տէր-Պետրոսեան:

«Ոչ մի ոստիկանապետ, ոչ մի անվտանգութեան ծառայութեան աշխատակից իրաւունք չունի բանաւոր կամ հեռախօսային կանչերով քաղաքացիներին հրաւիրել համապատասխան բաժանմունքներ, կանչի միակ օրինական ձեւը գրաւոր ծանուցագիրն է», - շեշտում է առաջին նախագահը եւ վստահ



Տեսարան մը Տէր-Պետրոսեանիմ աջակցող կազմակերպութիւններու համագումարին

հեցնում. - «Մինչ այժմ արձանագրուած այդօրինակ բոլոր ապօրինի գործողութիւնները վաղ թէ ուշ դառնալու են յատուկ քննութեան առարկայ, եւ պատասխանատուները կանգնելու են դատարանի առաջ»:

## ԹՈՒՐԲԻԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՒ ՓՈԽԵԼ 301 ՅՕԴՈՒԱԾԸ

Թուրքիա կը պատրաստուի փոխել խօսքի ազատութիւնը սահմանափակող ինդրայարոյց օրէնսդրութիւնը, որ բազմիցս քննադատուած է Եւրամիութեան կողմէ:

Արդարադատութեան նախարար Մեհմէթ Ալի Շահին լրագրողներուն յայտնած է, որ իր նախարարութիւնը 15 օրուայ ընթացքին կառավարութեան պիտի ներկայացնէ Քրէական օրէնսգիրքի 301 յօդուածի փոփոխութեան նախագիծը:

Այս մասին տեղեկացնելով «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, որ 301 յօդուածը օգտագործուած է այն գրողներու եւ լրագրողներու դէմ, որոնք չիշատակած են Հայոց Յեղափոխութիւնը:

301 յօդուածը օգտագործուած էր մեղադրանքներ ներկայացնելու համար Նոպէլեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկի եւ «Ակօս» թերթի սպանուած իմբազարպետ Հրանդ Տինքի դէմ: Առայժմ յստակ չէ, թէ կառավարութիւնը երբ պիտի սկսի քննարկել Քրէական օրէնսգիրքի մէջ առաջարկուող փոփոխութիւնը՝ զայն ներկայացնելու համար թրքական խորհրդարանի քուէարկութեան:

## 17 ԱՄԵԱՅ ՆԱԹԱԼԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԱՅՐԸ

Արեան քաղցկեղի հիւանդութենէ տարապող 17-ամեայ Նաթալի Սարգսեանի ողբերգական մահը, որ պատահեցաւ տօնական օրերու նախօրեակին, եկաւ չուզելու ոչ միայն Լոս Անճելըսի հայրութիւնը, այլ ամբողջ Ամերիկան, անգամ մը եւս օրակարգի վրայ բերելով ապահովագրութեան ընկերութիւն-հիւանդ փոխյարաբերութիւնը:

Արդարեւ՝ աւելի քան ամիս մը առաջ Նաթալիին փրկելու համար բժիշկները թելադրած էին լիարժի փոխարինման մեծածախս գործողութիւն մը: Սակայն, «Սիկնա» ընկերութիւնը, որու մօտ բժշկական ապահովագրութիւն ունէր Սարգսեան ընտանիքը, մերժած էր ստանձնել գործողութեան ծախսերը, առարկելով թէ, առաջարկուող գործողութիւնը խիստ փորձառական է:

Հինգշաբթի, Դեկտեմբեր 20-ին Նաթալիին ընտանիքի անդամներն ու ընկերները ճարահատ վիճակի մէջ եւ ժամանակի դէմ պայքարելով, բողոքի ցոյց մը կազմակերպած էին «Սիկնա» ընկերութեան Կլէնտէլի կեդրոնատեղիին առջեւ:

Տեղական հեռատեսիլի ընկերութիւններուն կողմէ այս ցոյցը մեծ ուշադրութեան արժանանալով, «Սիկնա»-ի պատասխանատուները վերատեսուցեան ենթար-

«Ճանաչէք ձեր իրաւունքները, մի ենթարկուէք իշխանութիւնների կամայականութիւններին, մի արձագանգէք իրաւապահ մարմինների ապօրինի կանչերին»:



17-ամեայ Նաթալիին Սարգսեան

կեցին իրենց նախկին որոշումը՝ հաստատելով գործողութեան ծախսերը:

Այս որոշումէն մի քանի ժամ ետք սակայն, նոյն երեկոյեան Նաթալիին Սարգսեան մահացաւ «Եու.Սի Էլ.էյ» համալսարանի հիւանդանոցէն ներս:

Նաթալիինի մայրը՝ Տիկին Հիլտա Սարգսեան ամբերիկեան մամուլին կատարած իր յայտարարութիւններու ընթացքին, մեղադրեց ապահովագրական ընկերութիւնը, իր գաւկի մահուան համար:

Նոյնը ըրաւ նաեւ ընտանիքի փաստաբան Մարք Կիրակոս, որ ոչ միայն մեղադրեց «Սիկնա»-ն, այլ նաեւ խոստացաւ դատի տալ ըն-

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՈՋԱՐՇԱԽԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Նախընտրական քարոզարշավը Հայաստանում նոր երանգներ է ձեռք բերել: Համեմատած 2003 թ. հետ՝ կիրառում են նոր տեխնոլոգիաներ: Ալեկի ճիշդ, դրանց մի մասը մոռացում է հինն է: Այսպես, «Հայլուրը» լիզենցում է խորհրդային ժամանակների «Լրաբերը», իսկ «Հայոց աշխարհը»՝ «Պրալուան», որոնք Ղարաբաղեան շարժման տարիներին ինչ սուտ ասես, որ չօրինեցին: Խորհրդային լրատվամիջոցների հիմնական խնդիրը «Ղարաբաղ» կոմիտեի վարկաբեկումն էր, եւ դրա համար նրանք առաջ էին քաշում ամենամանրեթեթ մեղադրանքներ: Դրանից, սակայն, «Ղարաբաղ» կոմիտեի հեղինակութիւնը միայն աճում էր: Նոյնն էլ հիմա է տեղի ունենում: Առանց վարանելու կարելի է ասել, որ Լեւոն Տէր Պետրոսեանի ժողովրդականութեան աճին լրատվամիջոցներից բոլորից շատ նպաստում է հենց հանրային հեռուստատեսութիւնը՝ իր մերկապարանոց եւ պարզունակ ստերով: Կարծում ենք, ՀՀԾ-ն պարտաւոր է «Հայլուրի» Տաթևիկին մի գովասանագիր յանձնել:

Սակայն իշխանական քարոզչամեքենան կիրառում է նաեւ վտանգաւոր հնարքներ, այն է՝ ընդդիմութեան դէմ խօսում են միւս ընդդիմադիրները: Սա Հայաստանի քաղաքական դաշտում նոր երեւոյթ է: Իշխանութեան ջրադաշին ջուր լցնողները հիմնականում երկուսն են՝ Արտաշէս Գեղամեանը եւ Վազգէն Մանուկեանը: Առաջինը շատ շուտով կ'սպառի իրեն, որովհետեւ նրա քննադատութեան որակը ոչնչով «Հայլուրից» առաւել է: Մի փոքր այլ է Վազգէն Մանուկեանի պարագան, որը գուցէեւ մեծ էլէկտորատ չունի, սակայն հասարակութեան աչքում չի կորցրել սկզբունքային քաղաքական գործչի իմիջը: Ժիշդ է, նա աւելի շատ իշխանութիւններին է քննադատում, բայց այդ ամէնը ստուերում է առաջին նախագահի հասցէին արուած յայտարարութիւնների եմթատեքստում: Նրա վերջին մեղադրանքներից մէկն էլ այն էր, որ Տէր Պետրոսեանի քարոզչութիւնը ներծծում է թոյնով եւ ամբողջովին տեղաւորում է սեւ piar-ի շրջանակներում: Սակայն նա այնքան էլ իրաւցի է: Նախ, Տէր Պետրոսեանն արդեն յայտարարել է, որ չի պատասխանելու ընդդիմադիր գործիչների մեղադրանքներին կամ քննադատութեանը: Երկրորդ, Տէր Պետրոսեանը հայ քաղաքական դաշտում միակն է, որ իր ելոյթներում չի խորշում դրական բաներ ասել իր մրցակիցների մասին: Օրինակ, իր վերջին հանրահաւաքում նա գովասանեց Սերժ Սարգսեանին այն բանի համար, որ հայ-թուրքական յարաբերութիւնների հարցում նարցիսիզմով չի տառապում, ինչը յատուկ է Քոչարեանին: Կարծում ենք, որ Վազգէն Մանուկեանը քաջութիւն կը գտնի եւ կը խոստովանի, որ գրնէ միտինգային ելոյթների մակարդակով առաջին նախագահը որեւէ մեկի հանդէպ սեւ piar չի իրականացնում: Իսկ որեւէ այլ ձեւով Տէր Պետրոսեանն առայժմ հանդէս չի գալիս: Մեղադրել նրան այն բանի համար, որ աջակցող թերթերում այս կամ այն յոդուածը բոլորին է, որ դուր է գալիս՝ այնքան էլ լուրջ է: Տէր Պետրոսեանի միտինգային ելոյթների առանձնայատկութիւնն այն է, որ դրանք բոլորը լուրջ վերլուծութիւններ են: Նախկինում

Հայաստանի ընդդիմութեան մէջ գերիշխում էր այն կարծիքը, որ միտինգը յարմար տեղ չէ խորը վերլուծութիւններով հանդէս գալու համար: Դրա հիմքում ընկած էր այն սխալ տեսակէտը, որ ժողովուրդը գնահատում է ոչ թէ սթափ եւ տրամաբանական, այլ՝ էմոցիոնալ եւ սուր խօսքը: Սրանում, իհարկէ, ճշմարտութեան տարր կայ, սակայն առաջին նախագահի միտինգային յաջողութիւնները փաստում են, որ մեր ժողովուրդն իրականում կարօտ է լուրջ ելոյթների, որոնք աչքի են ընկնում եւ բովանդակութեամբ, եւ մատուցման ձեւով:

Չուտ ինտելեկտուալ տեսանկիւնից, իշխանութիւնները Տէր Պետրոսեանի հետ բանավէճը պարտուել են, այն էլ՝ խոշոր ու չոր հաշուով: Ոչ Քոչարեանը, ոչ էլ Սերժ Սարգսեանը երբեք համակարգային ելոյթներ չեն ունեցել: Առաջին նախագահի հետ էլ բանավիճում են միայն հեռուկայ կարգով: Նրա ելոյթներից ընտրում են իրենց յարմար ինչ-որ պատահիկներ ու դրանց հիման վրայ կառուցում մեկնաբանութիւններ, որ սովորաբար զրպարտչական բնոյթ են կրում: Իրականում, Տէր Պետրոսեանի քննադատութիւնների մեծ մասը մնացել են անպատասխան: Եթէ, օրինակ, Վազգէն Մանուկեանն աւելի դիտողունակ գտնուեր, սեւ piar կիրառելու մէջ պէտք է մեղադրեր միայն իշխանութիւններին:

Պէտք է նկատել, որ իշխանական քարոզչամեքենան որքան էլ պարզունակ է, այնուամենայնիւ, շատ ակտիւ է: Նրանք չեն բաւարարում միայն հեռուստատեսութեանը գրաւելով: Այն բանից յետոյ, երբ «Հայլուրը» բարբաջեց, թէ Տէր Պետրոսեանին օգնելու նպատակով թուրքիան կեղծ դոլարներ է ուղարկել Հայաստան, որոշ «գիտուն» մարդիկ հասարակական վայրերում (օրինակ, ինայդրամարկղներում թոշակառուների հերթի ժամանակ) խորհրդաւոր տեսքով ուղղակի կրկնում են «Հայլուրին»: Նրանք հաւանաբար գլխի են ընկել, որ նոյնիսկ տնտեսագիտութիւնից ոչինչ չհասկացող թոշակառուները «Հայլուրի» հեքիաթներին չեն հաւատում: Ուստի, իշխանութիւններին ոչինչ չի մնում անելու, քան նորից ապաւինել ընտրակեղծիքների մէջ հմտացած անձերին:

**Ա.ԱՐԱՄԵԱՆ**  
«ԼՐԱԳԻՐ»

**ՁԼՍ-ՆԵՐԻ «ԺԻՇԴ ՏՈՆԸ»**

Եւրոպական կառույցներն ամփոփեցին նախագահական ընտրարշաւի այս փուլը: Այդ գնահատականներն, իհարկէ, տարբեր մեկնաբանութիւնների են արժանանում: Բոլոր դէպքերում, կարծում են, պէտք է ելնել երկու «կանխավարկածից»: 1/ ԵՄ-ն, ԵՆ-ն եւ ԵԱՀԿ-ն Հայաստանի եւ հայ ժողովրդի թշնամիները չեն, 2/ լիշեալ կառույցներն ի վիճակի չեն եւ նպատակ էլ չունեն Հայաստանում լուծել իշխանութեան հարցը:

Մեր իշխանութիւնն ու ընդդիմութիւնը եւրոպացիների գեկոյցներից վերցնում են այն, ինչ իրենց է ձեռք տալիս, այնինչ դրանցում նշուած է թէ՛ դրականը, թէ՛ բացասականը, որը իրականում կայ մեր կեանքում ընդհանրապէս եւ նախագահական ընտրութիւններում՝ մասնաւորապէս:

«Լրագրութեան» նման դրսեւորումների պատճառը յայտնի է. հեռուստաընկերութիւնները գտնուում են նախագահական լիակատար վերահսկողութեան տակ, եւ դա գաղտնիք է նաեւ եւրոպական կառույցների համար:

Դառնանք, այնուամենայնիւ, բացասականին: Այն շատ լաւ ամփոփուած է Հարաւային Կովկասում եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմմեբիի՝ «Մեղիամաքսին» տուած հարցազրոյցի վերնագրերում. «Եթէ նախագահական ընտրութիւններն անցկացուեն նոյն մակարդակի վրայ, ինչ ԱԺ ընտրութիւնները, դա հիասթափութեան պատճառ կը լինի» եւ «ՀՀ իշխանութիւնները պատասխանատու են ՁԼՍ-ների ճիշդ տոնի սահմանման համար»: Վերջին պնդման հետ մեր իշխանութիւնները, ըստ երեւոյթին, համաձայն չեն: Բայց պէտք է ՁԼՍ-ների մոնիտորինգի մեծ մասնագէտ լինել՝ տեսնելու համար, թէ ինչպէս են հեռուստաընկերութիւնները լուսաբանում, օրինակ, ընդդիմութեան հանրահաւաքները. «համը» կադրերի տակ կարդացում է քարոզչական թունոտ տեքստը, եւ դա, չգիտես ինչու, կոչում է «ռեպորտաժ»: «Լրագրութեան» նման դրսեւորումների պատճառը յայտնի է. հեռուստաընկերութիւնները գտնուում են նախագահականի լիակատար վերահսկողութեան տակ, եւ դա գաղտնիք է նաեւ եւրոպական կառույցների համար: Ժիշդ է, նոյնպիսի ազդեցիկութեամբ ընդդիմադիր թերթերը յարձակուում են Սերժ Սարգսեանի վրայ: Բայց համեմատել հարիւր հազարաւոր լսարան ունեցող հեռուստատեսութեանը մի քանի հազար հազարաւոր լսարան ունեցող թերթերին: Եւ դա, հետեւաբար, Սեմմեբիի վերը բերուած գնահատականը (պատասխանատուութեան մասին) միանգամայն արդարացի է:

Նկարագրուած երեւոյթը նոր է. 1996, 1998 եւ 2003 թուականների ընտրութիւնների ժամանակ «առաջին անգամ» փնտրում էր Վազգէն Մանուկեանին, Կարէն Դեմիրճեանին (նոյնիսկ մուլտիկ էին նկարել), Արտաշէս Գեղամեանին, Ստեփան Դեմիրճեանին: Իհարկէ, ինչպէս հիմա, այդպէս էլ անցեալում, իշխանութիւնը նման գնահատականը մերժում է: Այստեղ գործում է շատ պարզ հոգեբանական մեխանիզմ: Մարդկանց թուում

է, որ իրենց գովերգելը եւ ընդդիմախօսներին հայհոյելը անաչառութեան, օրինակութեան բարձրագոյն դրսեւորում է, որ դա իսկական, որակեալ լրագրութիւն է, քանի որ իրենք, բնականաբար, արժանի են միայն գովերգման, իսկ ընդդիմախօսները՝ միայն հայհոյանքի: Հենց այդ պատճառով էլ, երբ մեր իշխանաւորներին ասում ես, որ, օրինակ, «Հայլուրը» լրատուական ծրագիր է, նրանք անկեղծօրէն գարմանում են:

Իրավիճակը յաղթահարելու համար պէտք է նորոշակի նախապայմաններ եւ քայլեր, որոնց մասին խօսելու առիթ դեռ կը լինի:

**ԱՐԱՄ ԱՐԱՎԱՄԵԱՆ**  
«ԱՌԱԻՕՏ»

**ԽԵՂՃ ԲՈՒՈՆԱԾ**

Ըստ հաւաստի տեղեկութիւնների, նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանը Հանրապետական կուսակցութեան անդամ, ԱԺ պատգամաւոր Աշոտ Աղաբաբեանին լրջագոյն յանձնարարութիւն է տուել առաջիկայ նախագահական ընտրութիւններից առաջ: Աղաբաբեանին յանձնարարուել է 15 հազար ձայն բերել Սերժ Սարգսեանի օգտին, որի համար պատգամաւորը պէտք է ծախսի 1,5 միլիոն դոլար: Ամբողջ ինդիքն այն է, սակայն, որ Աշոտ Աղաբաբեանը, որին, ինչպէս յայտնի է, պատկանում են «Հրազդան» մարզադաշտն ու «Հրազդան» տօնաւիճակը, լուրջ ինդիքներ ունի: Մենք արդեն տեղեկացրել ենք, որ իշխանութիւնը այս մարզադաշտը նրանից վերցնելու ցանկութիւն ունի: Եւ պարոն Աղաբաբեանը, բերի այդ 15 հազար ձայնը թէ չբերի, միեւնոյն է, նա իր սեփականութիւնը պահելու շանսեր չունի: Բանն այն է, որ ինչպէս յայտնում են հաւաստի աղբիւրները՝ գործող իշխանութիւնը ցանկանում է փակել բոլոր տօնավաճառները, դրանք կենտրոնացնել մի տեղ եւ յանձնել այլ մարդու: Մեր տեղեկութիւններով, հսկայական այդ նոր տօնավաճառի սեփականատէրը դառնալու թեկնածուներն են ներկայիս «Փեթակ» տօնավաճառի տէրերը, որոնք, ի դէպ, Սերժ Սարգսեանի ազգականներն են: Միւս թեկնածուն է ամերիկահայ յայտնի գործարար Վահագն Յովնանեանի փեսան՝ գեներալ Արթուր Ալեքսանեանը (Ամարասի Արթուր):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻՆ ՀՆՁՄԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջամի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՊԱՉԱՆԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԱԻԹԵԱՆ  
Գե. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



**ԼՈՒՐԵՐ**

**ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՉԱՍԱԿՐԱՆՔԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԿԻՍՈՒԵԼ Է**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Ղարաբաղեան պատերազմի մասնակիցները, որոնք այսօր միաևորուած են տարբեր կազմակերպութիւններում ու միաևորումներում, 2008-ի նախագահական ընտրութիւններում առաջադրուած թեկնածուներին աստարելու հարցում բաժանուել են, հիմնականում, երկու խմբի: Մի մասը հակուած է աստարելու վարչապետ Սերժ Սարգսեանին, միւս մասը՝ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին:

Ազատամարտի վետերանների կուսակցութիւնը, օրինակ, յայտարարել է Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը պաշտպանելու մասին: Կուսակցութեան ղեկավար Յակոբ Գրիգորեանի փաստարկմամբ՝ Սերժ Սարգսեանից բացի, «ոչ ոք Արցախի խնդիրը այդքան լաւ չի պատկերացնում»:

«Երկրի համար վերջին տասը տարիներին կատարուած գործընթացներում պարոն Սարգսեանը բաւակաւնաչափ ներդրում ունի», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յաւելցեց Գրիգորեանը: - «Վերջին հաշուով, մենք նրան ընդունում ենք որպէս Ազատամարտի վետերան»:

Իսկ, օրինակ, «Սասուն» ջոկատի հրամանատար Լենդրուշ Տօնոյեանի խօսքով՝ ինքն ու իր ջոկատի անդամները աջակցում են առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին, քանի որ նրա ղեկավարութեամբ պատերազմ են յղթել:

«Յաղթել ենք իր (Տէր-Պետ-

րոսեանի) գաղափարով», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Տօնոյեանը՝ յաւելելով, թէ պաշտպանելով Տէր-Պետրոսեանի թեկնածութիւնը, ուզում են լուծել «հայ ազգի գոյատեւման խնդիրը»:

Տէր-Պետրոսեանի աստարելու մասին յայտարարել են նաեւ «Կորնիձոր» ջոկատի հրամանատար Արա խուղապերդեանը եւ ջոկատի միւս անդամները:

«Ինձ թոււմ է, կը լինեն որոշակի փոփոխութիւններ, որոնք կը տանեն դէպի բարելաւում՝ ե՛ւ սոցիալական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ ֆինանսական, ե՛ւ աշխատանքային», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց խուղապերդեանը:

Առաջիկայում Տէր-Պետրոսեանին աստարելու մասին, ամենայն հաւանականութեամբ, կը յայտարարի նաեւ Գաշտային հրամանատարների խորհուրդը, այդ թւում՝ Ղարաբաղի վետերանների միութեան նախագահ Արկաղի Կարապետեանը, «Տիգրան Մեծ» ջոկատի հրամանատար Վլադիմիր Առաքելեանը, Արցախի զնդի հրամանատար Միքայէլ Ապրեսեանը:

«Հակուածութիւն ունենք [ատարել Տէր-Պետրոսեանին], որովհետեւ նա աւելի ընդունելի նախագահի թեկնածու է, քան, ասենք, Սերժ Սարգսեանը, որը այս տասը տարուայ ընթացքում մեր աչքի առաջ քայքայեցին այս երկիրը», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Ապրեսեանը:

**«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՍՊԱՍՈՒՄ Է ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻՆ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Նորանկախ Հայաստանի առաջին արտգործնախարար Րաֆֆի Յովհաննիսեանի գլխաւորած «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչութիւնը ժամանակաւորապէս դադարեցրել է քաղաքական խորհրդակցութիւնները նախագահի թեկնածուներին որեւէ մեկին աջակցելու կապակցութեամբ եւ սպասում է դեկտեմբերի 19-ին առաջադրուած թեկնածուներին ուղարկուած հարցերի պատասխաններին:

«Հարցաշարը ձեւի համար չի ուղարկուել, այլ ուղարկուել է բովանդակային կողմնորոշում ստանալու համար», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց «Ժառանգութեան» խօսնակ Յովսէփ Խորոշուրդեանը: - «Մենք ուզում ենք տեսնել, թէ ով ինչպէս կը պատասխանի այդ հարցերին: Չպատասխանելն էլ պատասխան է: Եւ, ըստ դրա, կուսակցութիւնը կը կողմնորոշուի իր հետագայ անելիքների հարցում»:

«Ժառանգութիւն» կուսակցութեան խորհրդարանական խմբակ-

ցութեան քարտուղար Ստեփան Սաֆարեանի կարծիքով, Րաֆֆի Յովհաննիսեանի ընտրագանգուածի «դիապազոնը արժէքային առումով բաւականին լայն է՝ ներառելով ազգայնականներից մինչեւ ուլտրալիբերալներ»:

«Նրա ընտրագանգուածը կարող է, առաւելապէս, նոյնանալ այն ուժերի հետ, որոնք յատկապէս միջանկեալ հատուածում են գտնուում... դրանցից են Լեւոն Տէր-Պետրոսեանը, Վազգէն Մանուկեանը, չեմ բացառում նաեւ՝ Վահան Յովհաննիսեանը», - յաւելցեց Սաֆարեանը:

Անձնագրերի եւ վիզաների վարչութիւնը մերժել է Րաֆֆի Յովհաննիսեանին տրամադրել վերջին տասը տարում ՀՀ քաղաքացիութեան տեղեկանք, որը անհրաժեշտ է որպէս նախագահի թեկնածու առաջադրուելու համար: Այդուհանդերձ, դեկտեմբերի սկզբին անցկացուած Գեղարի հարցման արդիւնքներով, Րաֆֆի Յովհաննիսեանը երկրորդ տեղում է՝ վարչապետ Սերժ Սարգսեանից յետոյ:

**«ԲԱՐԳԱՒԱԾ ԶԱՅԱՍՏԱՆ»-Ը ՊԱՇՏՕՆԱՊԵՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան խորհուրդը Հինգշաբթի, Դեկտեմբեր 20-ին գումարած ընդլայնուած նիստում հրապարակեց խորհրդի՝ երեք օր առաջ կայացրած որոշումը՝ 2008 թուականի նախագահական ընտրութիւններում պաշտպանել վարչապետ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը:

Կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանը իր ելուցիւթում ասաց. - «Մենք մայիսի 12-ին կողմնցիտն յուշագիր ենք ստորագրել Հանրապետական կուսակցութեան հետ, եւ պէտք է ունենանք միասնական թեկնածու եւ միասին պէտք է աշխատենք նրա յղթանակով համար: «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը պաշտպանելու է Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը եւ ամբողջ կազմով աշխատելու է նրա յղթանակի համար... Մեր միասնական թեկնածուն կարող է լուծել Հայաստանի առջեւ կանգնած բոլոր խնդիրները»:

**ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐՄԱՆ ՄԵԼԻՔԵԱՆ.- «ԶԱՆՔԵՐ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ, ՈՐՊԵՍՁԻ ԼՂ-Ն ԻՆՔՆՈՐՈՇՈՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ»**

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՑԷ»:  
«Ազատագրուած տարածքները պատկանում են ատրպէյջանահայերին խորհրդային Ատրպէյջանում ծնուած լինելու իրաւունքով՝ իբրեւ նրանց կորցրած գոյքի փոխհատուցում: Այս մտեցմանը որեւէ միջազգային կառույց, որեւէ կառավարութիւն հակախտարակ չի բերել», - ասում է ԼՂՀ նախագահի նախկին խորհրդական, նախագահի թեկնածու Արման Մելիքեանը:

ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի իր վերջին ասուլիսում, ի պատասխան «Ա1+»-ի հարցի՝ հրաժարուեց մեկնաբանել Արման Մելիքեանի դիրքորոշումը եւ աւելացրեց, որ հայկական կողմը շարունակելու է իր որդեգրած ուղին: Վարդան Օսկանեանի պատասխանը Արման Մելիքեանին այսօր թոյլ տուեց ասել. «Հայկական կողմի որդեգրուածում միանշնակ բացակայում է ատրպէյջանահայերի խնդիրը: Օսկանեանի վերջին ասուլիսը ցոյց տուեց, որ Հայաստանի դիւանագէտները ջանքեր են գործադրում, որպէսզի Ղարաբաղի ժողովուրդը կարողանայ ինքնորոշուել Ատրպէյջանի կազմում: Ես կարող եմ վստահեցնել, որ իմ ընտրուելու դէպքում ՀՀ ԱԳ նախարարը չի խօսելու տարածքներ յանձնելու եւ Ատրպէյջանի կազմում ԼՂՀ բնակչութեան ինքնորոշուելու իրաւունքի մասին»:

Անդրադառնալով Վարդան Օսկանեանի այն յայտարարութեանը, թէ Օսկանեանը հասկանում է ատրպէյջանցիներին եւ երբեւէ հանրաքուէ անցկացնելու դէպքում Ղարաբաղի բնակչութիւնը լաւ ընտրութեան հնարաւորութիւն ունի, Արման Մելիքեանը «Ա1+»-ին վստահեցրեց, որ ճանաչելով ԼՂ բնակչութեանը չի պատկերացնում, թէ ինչը կարող է նրանց գայթակղել անկախութիւնը փոխել Ատրպէյջանի կազմում ինքնորոշուելու տարբերակի հետ. «Նման բան հնարուող չէ»:

Նա նաեւ վստահեցրեց, որ իրականութեանը չեն համապատասխանում Սերժ Սարգսեանի այն յայտարարութիւնը, թէ 1992-93թթ.-ին, երբ տարածքներ էին ազատագրուում, դրանք ազատագրող իւրաքանչիւր զինուոր գիտեր, որ հետագայում դրանք վերադարձուելու էին ԼՂ կարգավիճակի դիմաց. «Ան-



ՀՀ նախագահի թեկնածու Արման Մելիքեան

կախ նրանից, թէ ով է նման բան յայտարարել, դա այդպէս չէ: Պատերազմական շրջանի մի հատուածը եւ ԼՂ-ում եմ անցկացրել, եւ մարտիկներից որեւէ մէկը երբեւէ չի մտածել որ տարածք է ազատագրում, որ յետոյ յանձնի»: Արման Մելիքեանը այսօր ներկայացրեց ազատագրած տարածքների չյանձնելու իրաւական հիմքերը. «Իմ դիրքորոշման հիմքում ընկած է ատրպէյջանահայ փախստականների իրաւունքների ճանաչումը: Այսօրուց բանակցութիւնները շրջանցում են հայ փախստականների իրաւունքները. խօսում են ատրպէյջանցի փախստականների, տեղահանուածների մասին, սակայն խօսք չկայ հայ փախստականների մասին»: Մելիքեանի կարծիքով այս հարցում կողմնակալ դիրք են գրաւում նաեւ միջազգային կառույցները եւ մասնաւորապէս ՄԱԿ-ը. «ՄԱԿ-ը Հայաստանում փախստականների հետ կախուած այլ ծրագիր է իրականացնում, իսկ Ատրպէյջանում՝ այլ: Նկատի ունեմ տարածքներում վերաբնակեցնելու ծրագիրը»:

Արման Մելիքեանը նաեւ հերքեց 2008թ. ընտրութիւններում ՀՅԴ-ին աջակցելու հնարաւորութիւնը, թէեւ ՀՅԴ-ն նոյնպէս դէմ է տարածքներ յանձնելուն. «Տարիներ շարունակ ՀՅԴ-ն կամ իշխանութեան մաս է կազմում կամ համագործակցում է իշխանութեան հետ, եւ 10 տարի շարունակ ՀՅԴ-ն չկարողացաւ տարածքներ չյանձնելու դրոյթը դնել շրջանաւորութեան մէջ: Դա որեւէ հիմք չի կարող հանդիսանալ, որպէսզի վստահ լինենք, որ եթէ իշխանութիւնները որոշեն յանձնել տարածքները, ապա ՀՅԴ-ն դէմ կը լինի»:

**ԳԼԽԱԴՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹԻՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ Է ՅԱՐՈՒՅԵԼ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԴԻՍՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՅԻՄԱՆ ՎՐԱՅ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի Գլխաւոր դատախազութիւնն այսօր յայտնել է, թէ քրէական գործ է յարուցուել Ազգային ժողովրդավարական միութեան առաջնորդ, նախագահութեան թեկնածու առաջադրուած Վազգէն Մանուկեանի դիմում-բողոքի հիման վրայ:

«Հայկական ժամանակ» օրաթերթում տպագրուել էր Վազգէն Մանուկեանի «Մայն կամպֆ»- «Իմ պայքարը» յօդուածը, որում, ըստ Վազգէն Մանուկեանի, հրապարակայնօրէն տարածուել են նրա «պատիւն ու արժանապատուութիւնը նուաստացնող, բարի համբաւն արատաւորող ակնյայտ սուտ տեղեկութիւններ»:

Ըստ Գլխաւոր դատախազութեան մամուլի ծառայութեան, դիմումատու, մասնաւորապէս, նշել է, որ այդ հրապարակմամբ իրեն մե-

ղադրել են պետական յեղաշրջում, յեղափոխութիւն կազմակերպելու, բացարձակ դաւաճանութեան մէջ:

Նկատի ունենալով, որ Վազգէն Մանուկեանի դիմումում նշուած հանգամանքներում առկայ են գրապատուութեան եւ վիրաւորանքի յատկանիշներ, Գլխաւոր դատախազութեան մարդու դէմ ուղղուած յանցագործութիւնների գործերով վարչութեան կողմից այս շաբաթ յարուցուել է քրէական գործ՝ Քրէական օրէնսգրքի 135 եւ 136 (գրապատուութիւն եւ վիրաւորանք) յօդուածների առաջին մասերի յատկանիշներով: Առաջինի դէպքում Քրէական օրէնսգրքը սահմանում է նուազագոյն աշխատավարձի հարիւրապատիկից հինգհարիւրապատիկի չափով սուգանք, երկրորդի դէպքում՝ նուազագոյն աշխատավարձի հարիւրապատիկից չորսհարիւրապատիկի չափով սուգանք:



ԼՈՒՐԵՐ

ՀՐԱԴԱԴԱՐ, ՈՐ ԿԵԱՆՔԵՐ Է ԽԼՈՒՄ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Սա-
ռեցնելով սառեցուած հակամար-
տութիւնը... այս վերնագրով Մի-
ջազգային ճգնաժամային խմբի
եւրոպական ծրագրի տնօրէն Սա-
բինա Ֆրէյզըրը «Պոսթոն Կլոբ»
թերթում այսօր յօդուած է հրա-
պարակել, որում դարաբաղեան հա-
կամարտութեան կարգաւորման
հագուադէպ հնարաւորութիւն է
համարուած ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի
առաջարկած հիմնարար սկզբունք-
ները:



Սաբինա Ֆրէյզըր

«Երբ պատերազմ է բռնկուած,
միջազգային հանրութիւնը սովոր-
աբար անչափ ուշ է արթնանում:
Իսկ կարող ենք մենք կանգնեցնել
պատերազմը մինչև դրա սկսուելը:
Մենք այդ հնարաւորութիւնն
ունենք ԼԼԵՆային Ղարաբաղի դէպ-
քում, որտեղ Հայաստանն ու Ատր-
պէյճանը պատրաստուած են պատե-
րազմել: Կա իրական հնարաւորու-
թիւն՝ կանխելու պայթիւնը մին-
չեւ դրա տեղի ունենալը»,- գրում
է Սաբինա Ֆրէյզըրը:

ին անցկացուելիք ընտրութիւննե-
րի ժամանակ ԼԵՆԱյին Ղարաբա-
ղի թեմայի շահարկումը նուազա-
զոյնի հասցնելուն: Ընտրաշաւի
ընթացքում այդ կրակի հետ
խաղալու գալթակողութիւնը քա-
ղաքական գործիչների մօտ վերաց-
նելը կը հանդարտացնի հասարա-
կական ընդդիմութիւնը բանակ-
ցութիւններին եւ կը դիւրացնի
[ընտրութիւններին] շատ չանցած
պատշաճ բանակցութիւններ սկսե-
լու ճանապարհը առաջնորդների
համար»,- ասել է նա:

«Դա յաճախ անուանում են
սառեցուած հակամարտութիւն, սա-
կայն չնայած գինադադարին՝ մի
քանի հազար մարդ է սպանուել
վերջին 13 տարիներին: Երկու
երկրները հակադաս միջոցներ են
ներդնում իրենց գինուած ուժե-
րում: - Նշում է: - Թէեւ լայնա-
մասշտաբ պատերազմը կարող է
տեղի ունենալ մի քանի տարի
յետոյ, սակայն հազիւ թէ դա
առիթ է լուծման հասնելու գոր-
ծում միջնորդների յապաղման,
յատկապէս երբ իրանը կողքին է,
եւ հակամարտութեան պոտենցիալ
զօտով են անցնում մի շարք կա-
րեւորագոյն նախատար է գազա-
տար խողովակաշարեր»:

«Հիմնարար սկզբունքները
ընդգրկում են, նախ եւ առաջ՝
նուիրուածութիւն խնդրի լուծ-
ման նպատակով ուժ չկիրառելուն:
Հայկական ուժերը պարտաւորուած
են դուրս գալ ԼԵՆԱյին Ղարաբա-
ղի շուրջ իրենց զբաղեցրած տա-
րածքներից: Ինչ վերաբերում է
ԼԵՆԱյին Ղարաբաղին՝ համաձայ-
նութիւն պէտք է ձեռք բերուի նրա
ինչ-որ ժամանակաւոր կարգաւի-
ճակի մասին: Նպատակը պէտք է
լինի տեղահանուածների վերա-
դարձը հեշտացնելը՝ մինչեւ ԼԵՆ-
Ային Ղարաբաղի վերջնական կար-
գաւիճակի յստակեցման նպատա-
կով հանրաքուէի անցկացումը», -
գրում է Ֆրէյզըրը:

Ըստ նրա՝ երկու երկրներում
տարուող պետական քարոզչութիւնը
ծառայում է նրան, որ հասարա-
կութիւնն ընդդիմանայ որեւէ փոխ-
գիշման՝ «էլ չասած հաշտեցման
մասին»:

«Այս սկզբունքների հիման
վրայ, որոնց՝ ընդհանուր առմամբ
ընդունելի լինելու մասին յայտա-
րարել են երկու կողմերն էլ, վերջ-
նական համաձայնութիւնը կարող է
իրականութիւն դառնալ», - գրել է
Միջազգային ճգնաժամային խմբի
եւրոպական ծրագրի տնօրէնը:

ԵՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՅՅՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ
ՄՏԱՅՈՎ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿՈՎ

Շարունակուած էջ 1-էն

«Աւելին, ոստիկանութեան
բռնութիւնները, կարծես թէ, աւել-
ցած են տարուայ ընթացքին եւ
արձանագրուած են Մարդու իրա-
ւունքներու Պաշտպանի եւ Եւրո-
պայի Խորհուրդի մարդու իրա-
ւունքներու հարցերով յանձնակա-
տարի կողմէ», - կը յայտնէ Կո-
լոմբիէ:

«Մարդու իրաւունքներու
պաշտպանութեամբ զբաղուող ոչ
կառավարական կազմակերպութիւն-
ներու եւ լրատուամիջոցներու ներ-
կայացուցիչները, որոնց հետ մենք
հանդիպած ենք, բոլորն ալ կը
յայտնէին, որ մարդու իրաւունքնե-
րու պաշտպանութեան վիճակը երկ-
րէն ներս, 2007 թուականին վատ-
թարացած է», - կ'եզրափակէ գեկոյ-
ցի հեղինակ ձորձ Կոլոմբիէ:

17 ԱՄԵԱՅ ՆԱԹԱԼԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԱՅԸ

Շարունակուած էջ 1-էն

կերութեան պատասխանատուները՝
մարդասպանութեան մեղադրանքով:
Նախալինին վիճակուած
տիրու ճակատագիրը ու դէպքերու

մանրամասնութիւնները լայն ար-
ձագանք գտան ամերիկեան լրատ-
ուական միջոցներուն կողմէ, այս
առթիւ, անգամ մը եւս քննարկ-
ման առարկայ երկրի առողջապա-
հական դրութիւնը:

ՍԱՀԱԿԱՇԻԼԻՆ ՅԱՐԳՈՒՄ Է ՀԱՅԵՐԵՆԸ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Դեկ-
տեմբերի 24-ին Ախալքալաք էր
այցելել Վրաստանի նախկին նա-
խագահ, այժմ նախագահի թեկնա-
ծու՝ Միխէյլ Սահակաշւիլին: Նա
Ախալքալաքում մասնակցել է բնա-
կան գագի բացման արարողութեա-
նը, այնուհետեւ Ախալքալաքի Մշա-
կոյթի տան առջեւ հանդիպում է
ունեցել շրջանի բնակչութեան հետ:

խօսքերով, մեծ հնարաւորութիւն-
ներ են բնակչութեան համար,
կարեւոր են այն բանով, որ կ'ստեղծ-
ուեն նոր աշխատատեղեր: Շնորհիւ
այս բարեփոխումների, Սահակաշ-
ւիլին հաւատացած է, որ Սամցխե-
Ջաւախք տարածաշրջանը կ'ունե-
նայ բարձր դիրքեր ոչ միայն
Վրաստանում, այլեւ Եւրոպայում:

Սահակաշւիլին խօսել է շրջա-
նի ապագայ տնտեսական զարգաց-
ման մասին.

Սահակաշւիլու հանդիպումը
բնակչութեան հետ տեւել է ընդա-
մէնը 15 րոպէ: Չնայած հանդիպ-
ման այդ սուղ ժամանակահատու-
ածին տեղացի լրագրողները հասց-
րել էին նախկին նախագահին
հարցնել հայոց լեզուին տարա-
ծաշրջանում երկրորդ պետական
լեզուի կարգավիճակի վերաբեր-
եալ.

- 2008 թ. սկսուելու են ամ-
բողջ շրջանի գազաֆիկացման աշ-
խատանքները, իւրաքանչիւր ըն-
տանիք կ'ապահովուի բնական գա-
զով, որը հնարաւորութիւն կը տայ
բնակչութեանը լուծելու ջեռուց-
ման հետ կապուած խնդիրները:

«Մենք բոլորս պէտք է սովոր-
րենք պետական՝ վրաց լեզուն, մնա-
ցած լեզուները մենք յարգում
ենք», պատասխանել է նա:

- Ախալքալաքում կը կառուց-
ուի օդանավակայան, կը շարունակ-
ուեն ճանապարհաշինարարական
աշխատանքները:

Սահակաշւիլին կոչ է արել
շրջանի բնակչութեանը Յունուա-
րի հինգին ցուցաբերել ակտիվ
մասնակցութիւն եւ կատարել ճիշդ
ընտրութիւն:

- 2008թ. Մայիսից պէտք է
Ախալքալաքում գործի նոր հեռա-
խօսացանց, ասել է նա:

Այս ամէնը, Սահակաշւիլու

ԼԵՌՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԿՈՉ Կ'ԸՆԷ

Շարունակուած էջ 1-էն

քանի դեռ նրանք ձեզ գրաւոր
ծանուցագրեր չեն ուղարկել: Իսկ
ծանուցագրեր ստանալու պարա-
գայում, կրկնօրինակէք դրանք, եւ
պատճեններն ուղարկէք մեր Շարժ-
ման գրասենեակներ», - կոչ կ'ընէ
Տէր-Պետրոսեան, շեշտելով. - «Սա,
եթէ կ'ուզէք, համարէք իմ առա-
ջին, առաջիմ ոչ պաշտօնական,
հրամանագիրը»:

եանի կարծիքով, իշխանութիւնը
դիմած է նաեւ շինծու թեկնածու-
ներու օգնութեան: «Խօսքը վերա-
բերում է որոշ տիրահաճակ անձ-
նաւորութիւնների, ովքեր նոյնպի-
սի չարաբաստիկ դերակատարու-
թիւն են ունեցել, մասնաւորապէս,
1998 եւ 2003 թուականների ընտ-
րութիւններում, ակնյայտօրէն գոր-
ծելով յաղթող թեկնածուներ կա-
րէն եւ Ստեփան Դեմիրճեանների
դէմ եւ վերջին հաշուով՝ նպաստե-
լով Հայաստանի ներկայ յանցաւոր
վարչախմբի կայացմանն ու ամ-
բապնդմանը»:

Միւս կողմէ, Դեկտեմբեր 22-
ին տեղի ունեցաւ ԼԵՌՆ Տէր-
Պետրոսեանի աստարող ուժերու
հանրապետական համագումարը,
որու ընթացքին առաջին նախա-
գահը յայտարարեց, որ յառաջիկայ
նախագահական ընտրութիւններու
ընթացքին քաղաքական պայքարը
պիտի ընթանայ իր եւ Սերժ Սարգս-
եանի միջեւ:

Համագումարի ընթացքին
ելոյթ ունեցան նաեւ Տէր-Պետրոս-
եանին աստարող քաղաքական ու-
ժերու եւ հասարակական կազմա-
կերպութիւններու ներկայացուցիչ-
ներ, որոնք անգամ մը եւ եւս
բացատրեցին, թէ ինչու կանգնած
են առաջին նախագահի կողքին:

«Ոչ մի այլ թեկնածուի շուրջ
այսքան բազմաքանակ եւ այսքան
ազդեցիկ ուժեր չեն համախմբե-
ուել, ինչը թոյլ է տալիս խօսել
եթէ ոչ այնքան ընդդիմութեան
միասնական թեկնածուի, ապա
առնուազն վարչախմբին հակա-
դիր յստակ բեւեռի ձեւաւորման
մասին», - ըսաւ Տէր-Պետրոս-
եան:

Հայաստանի ժողովրդական
կուսակցութեան առաջնորդ Ստե-
փան Դեմիրճեան, մասնաւորապէս,
ըսաւ. - «Վարչախումբը կարծես
թէ գերխնդիր է դարձրել բարո-
յազրկել հասարակութիւնը, եւ այս-
տեղ զարմանալի որեւէ բան չկայ,
որովհետեւ նման վարչախումբը
կարող է գոյատեւել միայն բարո-
յալքուած հասարակութեան պայ-
մաններում»:

«Համակարգի վերարտադրու-
թիւնը նշանակում է եւս տասը
տարուայ ստրկութիւն, թշուառու-
թիւն եւ ազգային նուաստացում:
Մեր իշխանութիւնները աւելի ան-
յաղթահարելի չեն, քան Խորհրդա-
յին Միութեան իշխանութիւննե-
րը: Եթէ մենք կարողացանք յաղ-
թել Գորբաչովին, ապա ի՞նչն է
մեզ խանգարում յաղթել Ռոբերդ
Քոչարեանին եւ Սերժ Սարգսեա-
նին», - աւելցուց ԼԵՌՆ Տէր-
Պետրոսեան:

Նախկին վարչապետ Հրանդ
Բագրատեանի յայտարարեց, որ
Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ
Սարգսեանն այնքան հարստացած
են, որ անոնց յաղթանակի պարա-
գային ոչ թէ իրենք պիտի ծառա-
յեն այս պետութեան, այլ պետու-
թիւնն է որ իրենց պիտի ծառայէ:

«Նկատի ունենալով այն ակն-
յայտ իրողութիւնը, որ Հայաստա-
նի ներկայ իշխանութիւնները
սեփական ժողովրդին վերաբեր-
ուած են օտարի պէս՝ ոտնահարելով
նրա բոլոր սրբութիւններն ու ար-
ժանապատուութիւնը, այդպիսի իշ-
խանութիւնների դէմ մղուած
պայքարը նոյնպէս ազգային ազա-
տագրական պայքարի բնոյթ է
ստանում», - յայտարարեց ան:

«Հանրապետութիւն» կուսակ-
ցութեան առաջնորդ Արամ Սարգս-
եան, իր հերթին, յայտարարեց. -
«Իշխող զոյգի համար իշխանու-
թիւնը պահելը կենաց ու մահու
խնդիր է, ու դա է պատճառը, որ
իրենք ելել են կուռի, ոչ թէ
ընտրութեան, կուռի՝ ԼԵՌՆ Տէր-
Պետրոսեանի դէմ: Մենք պարտա-
ւոր ենք յաղթել՝ յանուն Ղարաբա-
ղի հարցի արժանապատիւ լուծ-
ման, մենք պարտաւոր ենք յաղթել՝
յանուն արդարութեան, յանուն
«Հոկտեմբերի 27»-ի գործի լիար-
ժէք բացառապատման, եւ մենք յաղ-
թելու ենք»:



ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳՈՅԱՏԵՄԱՆ ՀԱՐՑԸ ՈՂՁ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՏԱՅՈՂՈՒԹԻՒՆՆ Է

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Առանց պետականության 600 տարի գոյատևելուց յետոյ Հայաստանի ձեռք բերած անկախությունը պետք է պահպանել աչքի լոյսի պէս: Եթէ սայթաքենք, մեր հարեւանները, նաև գերպետությունները, որոնք միայն իրենց տնտեսական ու քաղաքական շահերն են ճանաչում, գիշատիչների նման կ'ոչնչացնեն Հայաստանը: Այն ժամանակ հարցականի տակ կը դրուի կորցրած պետականության վերականգնումը: Հետեւաբար Հայաստանի եւ Արցախի գոյատևման հարցը ողջ հայ ժողովրդի մտահոգությունն է այսօր:

Հայ ժողովրդին առանց արևելյան թափելու վիճակուած անկախության պատճառած վիշտն ու ցաւը չաշտնուեցին տարբեր հանգամանքներում:

1. Հայաստանին պարտադրուած Արցախում պատերազմի վերածուած ազգային ազատագրական պայքարով ընդդէմ Ատրպէյճանի: Բազմաթիւ ազատամարտիկների անձնուրացութեան եւ գոհողութեան գնով ազատագրուեցին մեր պապենական հողերը եւ Արցախն անկախացաւ, բայց Հայաստանը շրջափակման մէջ ընկաւ Ատրպէյճանի ու Թուրքիայի կողմից:

2. Խորհրդային Միութեան փլուզումից ու Հայաստանի անկախացումից յետոյ արդիւնաբերութեան քայքայումը ծանր հետեւանք ունեցաւ ժողովրդի ապրելակերպի վրայ, որովհետեւ սարդոստայնի նման իրար կապուած Խորհրդային Միութեան տարբեր հանրապետությունների արդիւնաբերութեան ոչ մի ճիւղ էջր կարող վերականգնուել ինքնուրոյն կերպով:

3. Արցախեան ազատագրական պայքարին գուգահեռ Հայաստանում տեղի ունեցած բնական աղէտը՝ սարսափելի երկրաշարժը հսկայական մարդկային գոհեր եւ նիւթական կորուստներ պատճառեց հայրենիքին, որը դարձաւ Հայաստանի կառավարութեան համար այդ հետեւանքները վերացնելու պայքարի երկրորդ ճակատը:

Այս բոլորը ծանր ազդեցություն ունեցան Հայաստանի տնտեսութեան վրայ, որի հետեւանքով առանց նիւթական միջոցների մնացած ժողովրդի մէջ աշխուժացաւ դեռ Խորհրդային Միութեան ժամանակ սկսած արտագաղթը:

Արժանիօրէն պէտք է գնահատել Հայաստանի առաջին նախա-

երեսան, 13 Դեկտեմբեր, 2007 թ. Մեծարգոյ Պարոն Բահարեան, Ստացանք Հայաստանի հանրապետութեան հիմնադիր-նախագահի Լեւոն Տէր-Պետրոսեանի որպէս նախագահի թեկնածու առաջադրուելու առիթով մեր հայրենակիցների յղած քաջալերական նամակը: Այն ջերմութեամբ քննարկուեց Դեկտեմբերի 8ի 90 հազարանոց հանրահաւաքում, տեմստը հրապարակուել է «Հայֆ» թերթում (12.12.2007): Հայրենիքը արժանապատիւ քաղաքացիներով քարգաւան երկիր տեսնելու աշխարհասփիւռ մեր հայրենակիցների բնական մտահոգութիւնը արտայայտուելով մեզ: Մտորակալ եմք նախագահական ընտրութիւններում Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութիւնը պաշտպանելու՝ Հայաստանի ժողովրդին ուղղուած այդ կոչի համար: Խնդրում եմք մեր շնորհակալութիւնը փոխանցել նաև նամակը ստորագրած մեր միւս հայրենակիցներին: Այնքանադ Արգումանեան Լեւոն Տէր-Պետրոսեանի Առաջադրման Քաղաքական Նախաձեռնութեան Կենտրոնական Գրասենեակի Տնօրէն

գահ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ կառավարութեան անդամների ներդրած հսկայական ջանքերը, որոնց շնորհիւ այդ դժուարին պայմաններում, առանց հնարգետիկ պաշարների, պարենի ու հացի դժուարութեամբ ձեռք բերումով, նրանք ստեղծեցին նաև հայկական բանակը, փառքով լուծեցին իրենց պարտադրուած խնդիրները եւ ապահովեցին Հայաստանի ու Արցախի անվտանգութիւնը:

1998 թ. իշխանափոխութեան ժամանակ «Լեւոն Տէր-Պետրոսեանը Արցախը ծախում է» պատրուակով ու խոստանալով ժողովրդին առանց Ատրպէյճանին գիշտուներ կատարելու ապահովել Արցախի անկախութիւնը, իշխանութիւնից հեռացած «Խաղաղութեան կուսակցութեան» փոխարինեց «Պատերազմի կուսակցութիւնը», որը ոչ միայն չլուծեց Արցախի հարցը, այլ նաև չեզոքացրեց Արցախի մասնակցութիւնը բանակցային գործընթացին, իր վարած արտաքին եւ ներքին քաղաքականութեամբ Հայաստանը մեկուսացրեց տարածաշրջանային ծրագրերից, աճող կաշառակերութեան ու կոռուպցիայի պայմաններում արտագաղթը աւելի մեծ թափ ստացաւ, հարցականի տակ դնելով Հայաստանի լինել-չլինելու հարցը:

Իրենց 10 տարուայ իշխելու ընթացքում այսօրուայ կառավարողները գեղադրեցին ու շարունակում են գեղադրել Հայաստանի ունեցուածքը իրար մէջ բաժանելով, որի հետեւանքով դարձան միլիոնատէրեր, իսկ նրա ռազմավարական նշանակութիւն ունեցող արդիւնաբերական ձեռնարկութիւնների մի մասը յանձնեցին Ռուսաստանին «պարտքի դիմաց գոյք» անուանումով, մի մասն էլ օտար

ընկերութիւններին ծախեցին չնչին գումարներով, կախման մէջ ընկնելով նրանցից, ինչպէս Արմենիսթը: Եթէ նրանք այսուհետեւ էլ շարունակեն մնալ իշխանութեան վրայ, առանց խղճի խայթի կը վաճառեն նաև մեր սրբութիւնները՝ Մատենադարանը, Մեծ Եղեռնի ու Սարդարապատի յուշարձանները եւ այլ կառուցներ՝ իրենց գրպաններն ու ռեւանսները մտուցքով:

Նրանք աղաւաղեցին նաև Երեւանի դիմագիծը անօրինական շինարարական կառուցներով՝ վերացրին փողոցների մայթերը, անարգեցին նաև Երեւանի «Նութիւն» որակուած շէնքերն ու փողոցները, որոնք կարող էին օգտագործուել որպէս գրասալըջիկութեան վայրեր՝ հսկայական եկամուտ բերելով պետութեանը: Դրանց տեղում կառուցեցին եկամտաբեր շինութիւններ, ինչպէս նաև Հայաստանի պետական օպերայի ու թատրոնի երկաթեայ ճաղերով պարփակուած տարածքում վաշխառուաբար կառուցեցին հսկայ շէնք՝ որպէս կաֆէ, որով նեղացրին Ազատութեան հրապարակը, ընդդիմութեան հանրահաւաքները արգելափակելու նպատակով, չմտածելով նոյնիսկ, որ փաստօէն անարգեցին համաշխարհային նշանակութիւն ունեցող հայ մշակուցի գլխաւոր օճախը, որը հիացմունք էր պատճառում իւրաքանչիւր այցելուի:

1999 թ. Հոկտեմբեր 27-ին Ազգային ժողովի գլխատուածը նրանց ազատութիւն տուեց ժողովրդի ու պետականութեան ունեցուածքի հետ վարուել իրենց ուզած ձեւով, նոյնիսկ չմտածելով, որ այդ ահուելի ոճրի ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է երկրի անօրինական նախագահի եւ նրա աջա-

կիցների վրայ, որոնք չկարողանալով դեկավարել երկիրը, վերացրին իրենց սանձողներին՝ իրականացնելու համար իրենց սեւ գործը, երկիրը տանելով դէպի գահավիժում եւ երբեք պատասխանատուութիւն չզգալով այդ ահուելի ոճրի համար, որի անմիջական հետեւանքը պէտք է լինել երկրի նախագահի անխուսափելի հրաժարականը:

Երկրի նոր դեկավարները իրենց նպատակներին հասնելու ճանապարհին կորցրին մարդկային խիղճն ու դատողութիւնը, հեռուստատեսութիւնը, ռադիոն ու մամուլը դարձրին իրենց հլու-հնագանդ կամակատարը՝ շատ լաւ հասկանալով դրանց դերը ժողովրդին ու աշխարհին շեղելու իրենց գործած դաւադիր արարքներից, մի խօսքով բռնաբարեցին մամուլի ազատութիւնը եւ արգելեցին իրենց չենթարկուող հեռուստածրագրերը, միաժամանակ դիմելով ամէն տեսակի անմարդկային միջոցների իրականութիւնը արտացոլող մամուլի թղթակիցների, խմբագիրների ու խմբագրատների վրայ:

Նրանք մեծ յանցանք գործեցին նաև Արցախը վերաբնակեցնելու փոխարէն հայաթափելով այն՝ Երեւան բերին ու պաշտօններով ապահովեցին իրենց ազգուտակին, անտէր թողնելով իրենց բնօրրանը՝ Արցախը: Ընտրութիւնների ժամանակ 5-15 հազար դրամով (չնչին գումար) կաշառեցին ընտրողների մի մասին, իսկ միւս մասի վրայ ահ ու սարսափ տարածելով, բոլոր ընտրութիւնները իրականացրին իրենց օգտին: Երկրի սահմանադրութիւնը մնում է թղթի վրայ, որի փոխարէն գործում են իրենց օրէնքները, այսինքն իրաւական դաշտն ի սպառ վերացած է, որի հետեւանքով Հայաստանում ներդրում կատարող որքան սփիւռքահայեր խափեցին՝ նրանց գումարները իւրացնելով, իսկ վերջիններս հիասթափուած, չուսախափուած հեռացան հայրենիքից այլեւս ոտք չդնելու համար այդ կաշառակերութեամբ ու կոռուպցիայով յագեցած երկիրը:

Ներկայ վարչակարգը խուճապի է մատնուած առաջին նախագահի քաղաքականութիւն վերադարձով եւ աւելի է ուժեղացրել բռնարարքներն ու հալածանքները նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանին սատարող, աջակցող, օգնող անհատների ու կազմակերպութիւնների՝ Աժ պատգամա-

Մար.ք էջ 19

Advertisement for A.B.A. Insurance Services and Season's Greetings. Includes logos for Commercial, Auto, Fire, Life, and Health insurance, and a cartoon illustration of a man in a suit. Text: Season's Greetings, Շնորհակալութիւններ, Մոնախան Օպերու Վոյսիքով, ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻԱՄԱՆԹՈ ՄԱՐՈՆԵԱՆ, 818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



# ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՉՐԱՍԿՅՈՒԱԾ ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼԸ

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆՆԵՐ

Հիմնական եւ կարեւոր հարցում մը, որ տարիներէ ի վեր կը հարցուի, եւ գոհացուցիչ պատասխան չստանար, հետեւեալն է.

Ինչո՞ւ այսքան տարիներ ետք, արաբ-պաղեստինեան-իսրայէլեան հարցը կը մնայ անլուծ:

1950ական թուականներէն ստղին, արդէն իսկ 6-7 տասնամեակներ անցած են, եւ ոչ միայն Մերձավոր Արեւելքի, այլ աշխարհի խաղաղութիւնը խանգարող վերոյիշեալ հարցը տակաւին կը պահէ իր ոչ միայն արտար, այլ նոյնիսկ մասնակի լուծման:

Երկրորդ համաշխարհային պատերազմէն փխած մեծ տէրութեանց - Ամերիկա, Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա, Չինաստան - իրար յաջորդող կառավարութիւնները ինչ որ փորձած են վերոյիշեալ տագնապի լուծման համար, իրենց ճիգերը մնացած են ապարդիւն:

Ոչ միայն երկարաձող այս տագնապը կը շարունակուի, այլ ինչպէս վերջին քանի մը տասնամեակներու պատմութիւնը ցոյց տուած է, անոր ընկերացած են այլ տագնապներ, ուղղակի, իրմէ ծնած, եւ կամ անոր հետ առնչուած: Ուրեմն քաղաքական իրատես վերլուծողները այն համոզման եկած են որ եթէ գոյութիւն ունեցող սխալ մօտեցումներ, կամ ենթադրութիւնները չբացատրուին, եւ չհարթուին, Մերձավոր Արեւելեան երկարատեւ տագնապը պիտի չունենայ իր լուծումը:

Որո՞ւք են այս սխալ ենթադրութիւնները:

Ընդհանրապէս չորս են անոնք: Այս չորս ենթադրութիւնները ունին բազմատեսակ բնոյթ եւ տարողութիւն, այնպէս որ կարելի չէ անոնց միատեսակ եւ մէկ հասարակ յայտարար գտնել: Միջազգային քաղաքական միջնորդները պարտաւոր են լաւ հասկնալ սոյն տուեալները, եւ ամէն անգամ որ շրջանը այցելեն լուծումներ առաջարկելու համար, իրենց թղթածրարները բաւականին յստակ պէտք է ըլլան ստորեւ նկարագրուած հարցերու վերաբերեալ:

### ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆ

Արաբ-պաղեստինեան եւ իսրայէլեան տագնապի լուծման հաւանականութիւնը կրնայ ենթադրել եւ սակայն, անպայման ալ չապահովել Մերձավոր Արեւելքի խաղաղութիւնը: Պէտք է ամէնուն, մասնաւորապէս անգնապնդու յստակ ըլլայ որ շրջանէն ներս, եւ իսրայէլի հետ

ուղղակի կապ չունեցող հարցեր ալ կան որոնք շարունակական բնոյթ ունին: Ասոնցմէ կարեւորագոյններէն մէկն է իսլամ կրօնքի երկու մեծ բաժանմունքներու - սիւննի եւ շիի - շարունակական եւ դարերու վրայ երկարող պայքարները: Յատկապէս իրաքեան թատերաբեմէն ներս, սիւննի-շիի փոխ-յարաբերութիւնները եւ ասոնց վրայ նաեւ աւելցուած քրտական տուեալը, պատկերը կու տայ իրաքեան տագնապի իսկական տարողութեան: Եթէ Ամերիկան իրաքեան պատերազմը սկսաւ քանի մը տուեալներով, մեծ մասամբ շինծու, անոնցմէ զխաւորներէն մէկը



Հողային փոխ-գիշու մենք կամ շարունակական պատերազմ

կը հանդիսանար իսրայէլը հանգիստ ձգելու փնտռուքը: Անշուշտ կարելի չէ ըսել որ Ամերիկա յաջողեցաւ այս ապահովել, եւ սակայն ճիշդ ակներեւ էր: Միւննի-շիի լարուածութեան կարելի է միացնել նաեւ իրանի եւ արաբներու հարցերը, եւ մասնաւորապէս արաբ ազգայնականներու եւ արաբ իսլամիստ-ժայթղականներու լարուած փոխ-յարաբերութիւնները:

### ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆ

Մերձավոր Արեւելքի տագնապի լուծումը կապ ունի հողային փոխ-գիշումներու հետ: Ասոնք հիմնական լուծում չեն կրնար ապահովել, սրուած ըլլալով որ տագնապի խորքը տարած քայինէն աւելի գաղափարախօսական (ideological) է: Իսլամական ծայրայեղականները համոզուած են որ իսրայէլի, եւ ուրեմն նաեւ Արեւմուտքի դէմ իրենց պայքարը, հողային տարածքներ ապահովելու համար չէ, այլ իսրայէլի եւ

Արեւմուտքի վրայ յաղթանակ տանիլը: Նոյնը կը մտածէ ոչ-արաբ իրանցի նախագահը, որ պարբերաբար հրապարակ կը նետէ իսրայէլը բնաջնջելու գաղափարը: Փաստը այն է որ իսրայէլեան 2000ի Լիբանանէն քաշուիլը, եւ 2005ի Կազախէն քաշուիլը ոչ մէկ դրական յաւաք-խաղացք չարձանագրեցին տագնապէն ներս: Աւելին, առիթ տարուին նոր տագնապներու, թէ Լիբանանէն եւ թէ Կազախէն ներս:

### ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս ալ կապուած է երկրորդին հետ: Արեւմուտքի մէջ այն կարծիքը կը տիրէ որ եթէ իսրայէլ վերադարձնէ 1967ի վեց օրերու պատե-

երկար տարիներու ընթացքին, Արաֆատի եւ հիմա Մահմուտ Ապպասի իշխանութեանց օրով, աղքատութիւնը, անգործութիւնը դժուար եղած են արմատախիլ ընել: Մասնաւորապէս, Համասի գրաւած Կազախ ուղղակի թշուառութեան մատուցած է, մասնաւորապէս Արեւմուտքին Ապպասին տրամադրող գումարներէ ալ գրկուած է: Հաւանօրէն, մասնաւորապէս Արեւմուտքի կողմէ, այն ենթադրութիւնը կայ որ տնտեսական զարգացումը կրնայ փոխարինել ծայրայեղ ազգայնամոլութիւնը եւ կրօնական «ֆանատիսթիզմը», ճամբայ հարթելով խաղաղութեան եւ ապահովութեան: Յարց պաղեստինցիներու տրամադրուած միլիառաւոր տոլարները իրենց նպատակին չեն հասած:

### ԻՇՉ ԿԱՐԵԼԻ Է ԸՆԵԼ

1. Թէեւ երկարաշունչ աշխատանքի կը կարօտի. պաղեստինցիները եւ իրենց ղեկավարութիւնը պէտք է մշակեն երկարատեւ ծրագիրներ, կրթական, տնտեսական եւ քաղաքական մարզերէն ներս, քաղաքակիրթ եւ մշակուած ընկերութիւն մը ստեղծելու համար, որ մտահոգ ըլլայ մարդկային իրաւունքներու, անկախութեան եւ կրօնական ազատութեանց հաստատումով: Նման ընկերութիւն մը լուրջ աշխատանքի կը կարօտի:

2. Պէտք է լուծուի երկար տասնամեակներէ ի վեր արաբական երկիրներէն ներս գոյութիւն հաստատած գաղթականներու վերադարձի հարցը: Ասոնց վերադարձի համար, անհրաժեշտ գումարները պէտք է ապահովուին, մասնաւորապէս Արեւմուտքի կողմէ:

3. Արեւմուտքը եւ ծայրայեղ իսլամը, ի՞նչ գոյն ալ արած ըլլայ ան - Ալ-Քալիտա, թէ ազգայնական, յատկապէս համասեան մտածողութեամբ - ժամանակի ընթացքին խաղաղ գոյակցութեան բանաձեւ պէտք է գտնեն: Դժբախտ իրականութիւնը այժօր այն է որ Սեպտեմբեր 11ի հակաբեկչութեանէն ասդին, յայտարարուած պատերազմը, հակաբեկչութեան դէմ, Եւրոպայէն մինչեւ Իրաք եւ Աֆղանիստան, շատ չուսադրիչ չի թուիր ստեղծուած լարուած վիճակը մեղմացնելու համար:

Իսկ եթէ այս վիճակը պիտի տեւէ սերունդներու վրայ, աշխարհ կրնայ ինքզինք գտնել դարաւոր պայքարի մը մէջ, անորոջ դիմագծով եւ մարդկային եւ տնտեսական անհաշիւ վնասներով: Լաւատեսութեան համար լուրջ տուեալներ չկան, սակայն մասնաւորապէս նոր Տարուայ մը սկզբնաստիւթեան, յոյսը պէտք է լքել...

րազմի արդիւնք, հողային տարածքները, առաջարկութիւն մը որ իսրայէլի վարչապետ Էսրու Պարաքը ըրած էր 2000 թուականին, հարցը իր լուծումը կրնար ստանալ: Արաբական կողմը այս ալ մերժեց սկզբունքային այն հիման վրայ որ երկու տէրութիւններ իսրայէլեան եւ պաղեստինեան պիտի ստեղծուէին, իւրաքանչիւրը իբրեւ անկախ եւ ինքնիշխան պետութիւններ: Միայն վերջերս է որ այս գոյգ պետութեանց գաղափարը յառաջ կը քաշուի, յատկապէս Ամերիկայի կողմէ: Պաղեստինցիները, Ֆաթա շարժումը, մասնաւորապէս Համասը, տակաւին լման համոզուած չեն թուիր գոյգ պետութեան մտքին:

### ՉՈՐՐՈՐԴ ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս ալ այն ենթադրութիւնն է որ երկու անկախ պետութեանց ստեղծումով, յատկապէս պաղեստինցիներու համար կարելի է ապահովել տնտեսական լուրջ ապահովութիւն:

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS  
**ARABIAN NIGHTS**

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHALAH DANCERS

authentic cuisine  
full hookah bar  
VIP membership  
full cocktail bar  
live belly dancing  
live music and DJ

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599  
162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107



# ՐԱՅԱՍՏԱՆ

## ՐԱՅԱՍՏԱՆ 2007 - ԼԵՋՈՒԿԱՆ ԳԵԼՍՈՒՊԵՐԴՈՒՔԵԱՆ ՍԸ

### ԱՐԻՍՊ Գ. ՍԵՒԱԿ

Անոնք, որոնք վերջին տարիներուն Հայաստան այցելած են, կրնան վկայել կեանքի զանազան բնագավառներէն ներս կարգ մը հակասական, խաչաբաշխ երեւոյթներ: Ատոնցմէ մին լեզուն է, որ խառնիճաղանձ պատկեր մը կը պարզէ: Ոչոքի մէջ են որոշ «ցուցանմոյշ»ներ, որոնք մաքուր հայերէն կը բուրեն, սակայն կան ուրիշներ, որոնք եկած-կեցած են գրոհ տուած օտար ասպատակողներու պէս եւ, դժբախտաբար, քանակով առաջիններէն զգալիօրէն գերակշռող են: Տակաւին կայ նաեւ փոքր թիւ մը զուտ տեղական բնոյթ կրող օտար բառեր, որոնք ազգագրական որոշ արժէք մը կը ներկայացնեն:

Առաջին խումբին կը պատկանին սփիւռքահայ ականջին անվարժ այնպիսի բառեր, ինչպիսին են խուզարկուական (detective, search) մատնահարում (manicure), արտաժողովի փոխարկում (foreign currency exchange), ծրագրաւորում (programming), տարադրամի փոխանակման կէտ (foreign currency exchange post), զուգազուլպա (penty hose), գեղեցկութեան սրահ/կեղրոն (beauty parlor), գրաւատուն (pawnshop), ապառուիկ վաճառք (sale on credit), միջնորդավճար (braker's fee or commission), մարման ժամկէտ (expiration term), վարկի տրամադրման որոշում (decision to lend credit), տոյժ (penalty), վաղաժամկէտ (ahead of time, schedule), էջանշան (bookmark), լցնովի գարեջուր (draft beer), ապրանքանիշ (brand), վարձույթ (hire, hiring, rental use), շերտավարագոյր (cencian blind), շրթիռակոծուել (to be fired upon with rockets), տակդիր (diaper), մաքազերծուած (duty-free), դոփապար (tap dance), տոկոսադրոյք (rate of interest), շուրջօրեայ (twenty-four-hours, around-the-clock), թեժ գիծ (hot line), բուլկի (ցորենի ճերմակ ալիւրէն թխած հացիկ, bun), փքաբլիթ (մահիկաձեւ բուլկի կամ խմորեղէն (cookie) վրան շաքար ցանած), պրեանիկ (պզտիկ բուլկիներ), կորժիկ (խոշոր, կլոր cookie, որուն եզերքը փորակուած (grooved) է), գոճուկ (խոզուկ, piglet), հազրեվարդ (rosemary), հնդկացորեն (buckwheat):

Ամենուրեք, ըլլա՛յ փողոցը, ըլլա՛յ հեռատեսիլէն, աչքիդ կամ ականջիդ կը զարնեն վերոյիշեալ երկրորդ խումբին պատկանող օտարաբանութիւններ, օրինակի համար՝ դիսպետչեր (առաքիչ, dispatcher), աւտոտեսչութիւն (երթեւեկի կարգապահ ոստիկանութիւն, traffic plice dpeartment), կոնսուլտացիա (խորհրդակցութիւն, consultation), դիլեր (առևտրական, dealer), դիզայն (նախագիծ, design), ֆլորիստիկա (ճաղկաբուսութիւն, floricultuer), կոսմետոլոգիա (դիմաւարդարում, cosmetology), բանկ (դրամատուն, bank), բանկոմատ (ATM or cash machine), ապակոտաւորում (decoding), աքսեսուարներ (լրացուցիչներ, accesories), հիփոթեքա (գրաւ կամ գրաւարկութիւն, mortgage), աւտոմատացուած (ինքնաշխատողացուած, automated), հեռուստասերիալ (հեռուստաշարք, television series), պրոֆիլակտիկա (նախապահպանութիւն, ախտարգել, prophylaxis),

The massacre of the Armenians and looting of their homes was carried out by the local Turks from Aintab and surrounding villages, in spite of the presence of about 200 armed Turkish soldiers. The human losses of Armenians have been estimated to be about 400

dead (one of whom was my grandfather, and another was the grandfather of my cousin). Many more, about a thousand were wounded, during 3-4 days. The Turkish losses were about 10 dead. Many Armenian houses were looted.

Shimshir does not mention that the majority of the dead were Armenians. He mentions only a few Turks killed by Armenians. These were killed most probably in self defense by Armenians.

On page 164, Shimshir gives the following telegraphic communication, dated December six, 1895 from Tefvic Pasha, to Ottoman Mission in London: I quote;

"The Armenians of Aintab have poured poison into the drinkable water of the city". This is absolutely untrue and physically impossible. There was no water depot or piped water in Aintab that could be poisoned or contaminated. Moreover, the Armenians and Turks, as mentioned above, lived side by side and used the same water source, which was a small river running into the city. ( See "Gaziantep Cevre Incelemesi" pp.6,7, and 46, by Mehmet Solmaz and Hulusi Yetkin, Gaziantep, 1969). If the water source was poisoned by Armenians, they would be poisoned as much as the Turks! ( As far as I know, there is no poison that can be used to contaminate a water source)

To conclude: The Ottoman Archives that have interested historians, seem to be not reliable, and thus useless. It is not worth the paper that is used to print these so-called Archives.

## Postcards, Which Have Become Relics

Continued from page 3

the Armenian people." However, carrying it out, judging from our cultural values turning to dust in the Diaspora, is difficult. This is so, despite the fact that we have embassies throughout the world representing the Republic of Armenia, and cultural attaches working in them....

*This article originally appeared*

*in one of the November 2007 issues of Yerevan's Grakan Tert [Literary Gazette]. Copies of the album, entitled "The Tchiboukarians of Perknig," may be obtained by writing to: Aris Sevag, 33-39 80th St., Apt. 2, Jackson Heights, NY 11372 USA. Price, including postage and handling, is \$15 USD. (Orders placed from outside the US are payable only by money order.)*

## Home Blessing Service

Տ Ե Օ Ր Հ Ն Է Ք

WITH THE CELEBRATION OF CHRISTMAS  
BRING THE ARMENIAN CHURCH INTO YOUR HOME

Armenians have a wonderful tradition of having their homes blessed, usually at Christmas and Easter. Parishioners invite their priest into their homes to offer prayers and blessings for the home and the family.

Archbishop Khajag Barsamian, Primate of the Diocese of the Armenian Church of America (Eastern) is encouraging every family to have their home blessed, a meaningful way to welcome the light of Christ into our homes and to instill in our children a love for their Armenian faith and traditions.

Our Diocese will continue to promote the home blessings that bring priest and family together in a ritual that reaffirms the home's sanctity throughout 2008.

Invite your parish priest into your home for a "Home Blessing" today.

For more information, and to find the parish nearest your home, please visit:  
[www.armenianchurch.net/worship/blessings/index.html](http://www.armenianchurch.net/worship/blessings/index.html)



Diocese of the Armenian Church of America (Eastern)  
630 Second Ave., New York, NY 10016

Tel. (212) 686-0710 Fax (212) 779-3558 [www.armenianchurch.net](http://www.armenianchurch.net)

Massis Weekly on the Internet  
[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
updated every Friday



ՊԱՏՈՒԹԵԱՆ ԷՋԵՐԵՆ

62 ՏԱՐԻ ԵՏՔ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ  
ՍԹԱԼԻՆ ՈՒԶԱԾ Է ԹՈՒՐԲԻՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍԸ ՁԵՌՔ ՁԳԵԼ...  
ՀԱՅԵՐԸ ՀՈՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄՈՒՀԱՄՄԱՏ ՆՈՒՐԵՏՏԻՆ  
(«ՄԱՖԻՐ» ՕՐԱԹԵՐԹ, ԼԻԲԱՆԱՆ)

Թրքական օրաթերթերը վերջերս չլիշեցին, թէ Սովետական Միութեան ղեկավար Ժողովի Սթալին կ'ուզէր Համաշխարհային Բ. պատերազմին ընթացքին թուրքիայէն կարգ մը շրջաններ Սովետական Միութեան կցել, եւ թէ ան կ'ուզէր թուրքիոյ արեւելեան մասը ձեռք ձգել, հայերը հոն վերադարձնելու համար:

Այս մասին տեղեկութիւնները կը հիմնուին ամերիկեան պետական քարտուղարութեան արխիւներէն փաստաթուղթերու վրայ, սովետա-բրիտանական խօսակցութիւններու վերաբերեալ: Թրքական մամուլը դիտել տուաւ, թէ այն, ինչ որ լայն ծիրի մը մէջ տարածուած էր առանց պաշտօնական հաստատումներու, այդ փաստաթուղթերը եկան փաստելու գանոնք եւ թէ գնդակը ռուսական արխիւի դաշտին մէջ կը գտնուի, այդ տեղեկութիւնները հաստատելու կամ հերքելու համար: Աչքառու պարագան այն է, որ ռուսական հողային պահանջները եկած են խորհրդային ամենաբարձրաստիճան պատասխանատուին՝ Ժողովի Սթալինի լեզուով: Այդ օրերուն, սովետները այդ տարածաշրջաններու կը պատասխանէին ըսելով, թէ «պատերազմական քարոզչութիւններ» են Երկրորդ Աշխարհամարտին ընթացքին:

Համաձայն այդ վաւերացումը-

թերուն, Բրիտանիոյ եւ Սովետական Միութեան արտաքին գործոց նախարարներ էրնեսթ Պեվիլն ու Վիաչեսլաւ Մոլոթովը ժողով մը գումարած են 19 Դեկտեմբեր 1945ին, (թուականէս ճիշդ 62 տարի առաջ), երեկոյեան ժամը 7:10ին, ապա Սթալին ընդունած է երկու նախարարները: Յաջորդ օր, Բրիտանիան Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան յանձնած է ժողովին ատենագրութիւնը, որ արխիւներուն մէջ իր տեղը գրաւած է պաշտօնապէս:

Ատենագրութեան մէջ կը նշուի, թէ սովետական եւ բրիտանական պատուիրակութիւնները նախ քննարկեցին Պաքուի եւ Թեհրանի քարիւղի խնդիրը, եւ ապա անդրադարձան թուրքիոյ հարցերուն: Պեվիլն Սթալինին դիմած է հարցնելով. «Ի՞նչ է ձեր խնդիրը թուրքիոյ հետ»: Սթալին պատասխանած է ըսելով, թէ «հարցը կրնայ սխալ հասկցուիլ, սակայն ջիղերու պատերազմի նշաններ են»: Պեվիլն պատասխանած է. «Մենք թուրքիոյ դաշնակիցն ենք եւ կ'ուզենք նիւթը հասկնալ»: Սթալին բացատրած է ըսելով, թէ երկու խնդիրներ կան. առաջինը նեղուցն երու մասին է, իսկ երկրորդը կը վերաբերի թրքական կարս եւ Արտահան նահանգներուն Սովետական Միութեան կցումին: Պեվիլն ակնարկած է, թէ «խօսքեր կան որ խարխիսի մը կ'ուզէք նեղուցներուն մէջ», եւ Սթալին երկրորդած է անոր խօսքերը:

Կարսի եւ Արտահանի մասին Սթալին ըսած է, թէ թուրքիան անոնց վրայ ձեռք դրաւ, եւ թէ ինք կ'ուզէ սահմանը վերադարձնել 1921 թուականի կարսի եւ Մոսկուայի համաձայնագիրներէն առաջ տիրող վիճակին, նկատել տալով, թէ խորհրդային վարչակարգը տկար էր 1921 թուականին, եւ թէ թուրքիան այս վիճակէն օգտուեցաւ երկու նահանգները իրեն կցելու համար: Ատենագրութեան մէջ նոյնպէս կ'ըսուի, թէ Սթալին ըսած է, որ նեղուցներուն վերաբերող Մոնրոյի համաձայնագիրը թուրքիոյ իրաւունք տուաւ նեղուցները փակելու իր ուզած ժամուն, եւ թէ այս դժուարութիւն կը կազմէ Ռուսիոյ համար, որովհետեւ թուրքիան կրնայ ուզած ժամուն ճնշել իր վրայ: Ուստի, Մոսկուան կը պահանջէ նեղուցներէն անցնելու ազատութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ

Սթալին արժարձած է նաեւ երկրորդ խնդիր մը, ըսելով, թէ թուրքիան տիրած է հողերու, ուր հայեր եւ վրացիներ կը բնակէին, եւ թէ այս վիճակին սրբազրուծ կը պարտաւորեցնէ «վերադառնալ այն սահմաններուն, որոնք գոյութիւն ունէին ցարական իշխանութեան օրով, սակայն անհիմն է թուրքիոյ դէմ պատերազմի մասին գրոյցը»: Ասոր լուծումը, Սթալինին կարծիքով, Միացեալ Նահանգներուն եւ Բրիտանիոյ հետ խօսակցութիւններու մէջ կը կայանայ:

Պեվիլն Սթալինին հարցուցած է, թէ ի՞նչ կ'ուզէ որոշակիօրէն: Սովետ ղեկավարը պատասխանած է. «Վերադարձնել հայերուն եւ վրացիներուն պատկանող հողերը, ինչպէս որ էր իրավիճակը 1921 թուականի համաձայնագիրէն առաջ»: Եւ երբ Պեվիլն անոր ըսած է, թէ այդ հողերը երկար ժամանակ չմնացին Յարական Ռուսիոյ ձեռքը, Սթալին անոր կարծիքին համամիտ գտնուած է, սակայն ըսած է, որ «հայերն ու վրացիները միշտ հոն էին»: Պեվիլն անգամ մը եւս նեղուցներուն հարցը արժարձած է հարցնելով անոր, թէ Մոսկուան ճիշդ ի՞նչ կ'ուզէ: Սթալին պատասխանած է. «Սովետական Միութեան համար խարխիսի մը հաստատել հոն»:

Այդ վաւերացումներն այլ էջերու մէջ կը չլիշուին, որ Սթալին սկսաւ իր ծրագիրը գործադրել աստիճանաբար, Գերագոյն Սովետին մէկ որոշումին ընդմէջէն, 19 Հոկտեմբերի 1946ին, որ կը վերաբերէր աշխարհի մէջ հայերուն ուղղուած հրահրի մը, վերադառնալու խորհրդային Միութիւն եւ յատկապէս Սովետական Հայաստան, պայմանաւ որ վերադարձող հայերուն սովետական հպատակութիւնը տրուի: Այդ ծրագիրը կը վճռէր ցոյց տալ, թէ խորհրդային Հայաստանը այլեւս չի բաւեր միլիոնաւոր հայերու, ինչ որ ճնշումի տարր մը կը կազմէ թուրքիոյ վրայ, գանոնք վերադարձ նելու համար այն հողերը, ուրկէ բռնագաղթուած էին, թուրքիոյ արեւելքը: Փաստաթուղթերը կ'ըսեն, թէ Սթալին աշխատեցաւ հայերը բերելու ոչ միայն աշխարհի տարբեր երկիրներէն, այլ նոյնինքն թուրքիայէն նաեւ:



**Wahib's**  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

**CATERING FOR ALL OCCASION**

FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY  
FRIDAY ~ & ~ SATURDAY  
NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM  
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR



**BELLY~DANCING**

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641



**ՅԻՇԱՏԱԿ**

**ՎԱԹԱՌԻՆԱՄԵԱՅ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՅԱՅ  
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ, ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ, ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ  
(1947-2007)**

Ներկայ Ցուցակը որպես երախտիք կ'ընծայենք յիշատակին այն բոլոր բարձրաստիճան հայ հոգեւորականներուն որոնք վախճանեցան անցնող 60 տարիներու ընթացքին: Ընդամենը 69 հոգեւորականներ, Կաթողիկոս, Պատրիարք, Արքեպիսկոպոս, Եպիսկոպոս, որոնք ցուցակագրուած են վախճանման թուականի կարգով՝ սկսելով 1947 թուականէն: Վախճանեալ հոգեւորականներու մահուան թուականէն զատ տուած ենք նաեւ անոնց եպիսկոպոսացման թուականը, Կաթողիկոսին անունը որմէ ձեռնադրուած է օծուած են, ինչպէս նաեւ անոնց տարիքը:

**ԴՈԿՏ. ԶԱԻՆ Ա. ՔՆՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

1947 - **ԶԱԻՆ Պատրիարք Տէր Եղիայեան Կ. Պոլսոյ:** Զեռնադրուած Մատթէոս Բ Իգմբրլեան կաթողիկոսէն 1910-ին: 79 տարեկան:

1948 - **ՆԵՐՍԷՍ Արք. Մելիք-Թանգեան Ատրպատականի:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1914-ին: 82 տարեկան:

1949 - **ԿԻՒՐԵՂ Բ Պատրիարք Իսրայէլեան Երուսաղէմի:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 55 տարեկան:

1950 - **ՄԱՏԹԷՈՍ Արք. Ինճեան Զմիւռնիոյ:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1914-ին: 73 տարեկան:

1951 - **ԿԱՐԱՊԵՏ Արք. Մազլըմեան Յունաստանի:** Զեռն. Մատթէոս Բ Իգմբրլեան կաթողիկոսէն 1910-ին: 81 տարեկան:

1951 - **ԱՐՏԱԻԱԶԴ Արք. Սիւրմէան Ֆրանսայի:** Զեռն. Սահակ Բ Խապայեան կիրիկիոյ կաթողիկոսէն 1929-ին: 62 տարեկան:

1951 - **ԳԻՈՐԳ Արք. Արսլանեան Կ. Պոլսոյ:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1923-ին: 82 տարեկան:

1952 - **Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա Յովսէփեանց կաթողիկոս Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1917-ին: 85 տարեկան:

1953 - **ՆԵՐՍԷՍ Եպս. Աբրահամեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 70 տարեկան:

1954 - **Տ. Տ. ԳԻՈՐԳ Զ Չորեքճեան կաթողիկոս Ամենայն Հայոց:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1917-ին: 86 տարեկան:

1955 - **ՌՈՒԲԷՆ Արք. Մանասեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1928-ին: 73 տարեկան:

1956 - **ՏԻՐԱՅՐ Արք. Տէր Յովհաննէսեան Ամերիկայի:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1917-ին: 89 տարեկան:

1956 - **ՊԱՐԳԵՒ Եպս. Վրթանէսեան Երուսաղէմի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 51 տարեկան:

1957 - **ՓԱՌԷՆ Եպս. Մելքոնեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Ա Յովսէփեանց կիրիկիոյ կաթողիկոսէն 1947-ին: 84 տարեկան:

1958 - **ԳՐԻԳՈՐ Եպս. Գուսան Կարապետեան Պուլկարիոյ:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 67 տարեկան:

1959 - **ՅՈՎՍԷՓ Եպս. Կարապետեան Ամերիկայի:** Զեռն. Խորէն Ա Մուրադէզեան կաթողիկոսէն 1932-ին: 66 տարեկան:

1960 - **ՎԱՀԱՆ Արք. Կոստանեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 79 տարեկան:

1961 - **ԳԱՐԵԳԻՆ Պատրիարք Խաչատուրեան Կ. Պոլսոյ:** Զեռն. Գէորգ Ե Սուրբնեան կաթողիկոսէն 1922-ին: 81 տարեկան:

1961 - **ՄԱՄԲՐԷ Արք. Գալֆայեան Ամերիկայի:** Զեռն. Խորէն Ա Մուրադէզեան կաթողիկոսէն 1935-ին: 68 տարեկան:

1962 - **ԵԶՆԻԿ Եպս. Ազնաւուրեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 82 տարեկան:

1962 - **ՍՈՒՐԷՆ Եպս. Թորոսեան Ռուսմանիոյ:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 78 տարեկան:

1963 - **Տ. Տ. ԶԱՐԵԶ Ա Փայասլեան կաթողիկոս Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Ա Յովսէփեանց կիրիկիոյ կաթողիկոսէն 1947-ին: 49 տարեկան:

1963 - **ԴԵՐԵՆԻԿ Եպս. Փոլատեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Ա Յովսէփեանց կիրիկիոյ կաթողիկոսէն 1947-ին: 50 տարեկան:

1965 - **ՍԱՀԱԿ Արք. Տէր Յովհաննէսեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1951-ին: 86 տարեկան:

1966 **ՄԱՄԲՐԷ Արք. Սիւրուեան Եգիպտոսի:** Զեռն. Խորէն Ա Մուրադէզեան կաթողիկոսէն 1933-ին: 77 տարեկան:

1966 **ՎԱՐԴԱՆ Արք. Գասպարեան Գալիֆորնիոյ:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 92 տարեկան:

1968 - **ԽԱԿ Արք. Աջապահեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Սահակ Բ Խապայեան կիրիկիոյ կաթողիկոսէն 1929-ին: 85 տարեկան:

1968 - **ՎԱՐԴԱՆ Եպս. Տէր Սահակեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 90 տարեկան:

1969 - **ՍՈՒՐԷՆ Արք. Քէմհանեան Երուսաղէմի:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1951-ին: 84 տարեկան:

1970 - **ՇԱԻԱՐՇ Եպս. Գուլումեան Դամասկոսի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 62 տարեկան:

1970 - **ԵՂԻՇԷ Եպս. Սիմոնեան Գալիֆորնիոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1965-ին: 70 տարեկան:

1972 - **ՀԱՅԿԱԶՈՒՆ Արք. Աբրահամեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 65 տարեկան:

1973 - **ՄԱՇՏՈՅ Եպս. Թաճիրեան Շիրակի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1962-ին: 78 տարեկան:

1978 - **ԱՍՈՂԻԿ Արք. Ղազարեան Իրաքի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1957-ին: 69 տարեկան:

1978 - **ԲԱԲԳԷՆ Արք. Ապատեան Արժանթինի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1959-ին: 60 տարեկան:

1978 - **ՏԱՃԱՏ Արք. Ուրֆալեան Լիբանանի:** Զեռն. Զարեհ Ա Տանն Կիրիկիոյ կաթողիկոսէն 1956-ին: 59 տարեկան:

1980 - **ԿՈՄԻՏԱՍ Արք. Տէր Ստեփանեան Երեւանի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1957-

ին: 55 տարեկան:  
1980 - **ՀՐԱՆԴ Արք. Խաչատուրեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Զարեհ Ա Կիրիկիոյ կաթողիկոսէն 1958-ին: 54 տարեկան:

1981 - **ՊԱԿ Արք. Թուճայեան Անգլիոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 69 տարեկան:

1981 - **ՀԱՅՐԻԿ Արք. Ասլանեան Երուսաղէմի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 72 տարեկան:

1983 - **Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա Բարոյեան կաթողիկոս Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Ա Յովսէփեանց Տանն Կիրիկիոյ կաթողիկոսէն 1947-ին: 69 տարեկան:

1984 - **ՍԵՐՈՎԲԷ Արք. Մանուկեան Ֆրանսայի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 76 տարեկան:

1987 - **ՆԵՐՍԷՍ Արք. Բարտիկեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Խորէն Ա Կիրիկիոյ կաթողիկոսէն 1974-ին: 77 տարեկան:

1989 - **ՏԻՐԱՆ Արք. Ներսոյեան Ամերիկայի:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 85 տարեկան:

1990 - **ԵՂԻՇԷ Պատրիարք Տէր-տէրեան Երուսաղէմի:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1951-ին: 80 տարեկան:

1990 - **ՇՆՈՐՀՔ Պատրիարք Գալուստեան Կ. Պոլսոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1955-ին: 77 տարեկան:

1990 **ՎԱԶԳԷՆ Արք. Քէչիչեան Գանատայի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1984-ին: 55 տարեկան:

1991 **ՍԻՈՆ Արք. Մանուկեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1945-ին: 85 տարեկան:

1991 - **ԶԳՕՆ Եպս. Տէր Յակոբեան Միլանոյի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1958-ին: 87 տարեկան:

1994 - **Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա Պալճեան Ամենայն Հայոց կաթողիկոս:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1951-ին: 86 տարեկան:

1996 - **ՆՈՐԱՅՐ Արք. Պողարեան Երուսաղէմի:** Զեռն. Գէորգ Զ Չորեքճեան կաթողիկոսէն 1951-ին: 92 տարեկան:

1997 - **ԳԱՐԵԳԻՆ Գազանճեան Պատրիարք Կ. Պոլսոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1966-ին: 70 տարեկան:

1999 - **Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա Սարգիսեան Ամենայն Հայոց կաթողիկոս:** Զեռն. Խորէն Ա Տանն Կիրիկի-

իոյ կաթողիկոսէն 1964-ին: 67 տարեկան:  
1999 - **ԱՐՏԱԿ Արք. Մանուկեան Թեհրանի:** Զեռն. Զարեհ Ա Տանն Կիրիկիոյ կաթողիկոսէն 1956-ին: 68 տարեկան:

2000 - **ԲԱԲԳԷՆ Արք. Վարժապետեան Ուաշինկթընի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1957-ին: 82 տարեկան:

2000 - **ԳՆԷԼ Արք. Ճէրէճեան Դամասկոսի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1958-ին: 85 տարեկան:

2001 - **ՅԱԿՈԲ Արք. Վարդանեան Մարսիլիոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1965-ին: 82 տարեկան:

2002 - **ՀՄԱՅՆԱԿ Եպս. Ինդոյեան Երուսաղէմի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1974-ին: 94 տարեկան:

2002 - **ՎԱՂԱՐՇ Եպս. Խաչատուրեան Երուսաղէմի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1988-ին: 62 տարեկան:

2002 - **ԳԻՈՐԳ Արք. Սերայտարեան Վրաստանի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1973-ին: 64 տարեկան:

2003 - **ՍԱՀԱԿ Արք. Այվազեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Զարեհ Ա Կիրիկիոյ կաթողիկոսէն 1958-ին: 73 տարեկան:

2003 - **ՄԵՍՐՈՊ Արք. Աշեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Բ Կիրիկիոյ կաթողիկոսէն 1977-ին: 62 տարեկան:

2003 - **ԿԻՒՐԵՂ Եպս. Գաբրիելեան Երուսաղէմի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1978-ին: 82 տարեկան:

2004 - **ԶԱԻՆ Արք. Զինչինեան Եգիպտոսի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1965-ին: 75 տարեկան:

2004 - **ԶԱՐԵԶ Արք. Ազնաւուրեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Բ Կիրիկիոյ կաթողիկոսէն 1980-ին: 57 տարեկան:

2004 - **ՎԱՐԴԱՆ Արք. Տէմիրճեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Բ Կիրիկիոյ կաթողիկոսէն 1977-ին: 65 տարեկան:

2005 - **ՂԵՒՈՆԴ Արք. Զէպէյեան Տանն Կիրիկիոյ:** Զեռն. Գարեգին Ա Յովսէփեանց կաթողիկոսէն 1947-ին: 92 տարեկան:

2005 - **ՇԱՀԷ Արք. Աճէմեան Մայր Աթոռոյ:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1965-ին: 79 տարեկան:

2005 - **ՅՈՒՍԻԿ Եպս. Պաղտասեան Երուսաղէմի:** Զեռն. Վազգէն Ա Պալճեան կաթողիկոսէն 1992-ին: 71 տարեկան:

**Հայ Թելեժամբը Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ Ոչ Քէ մէկ, ոչ Քէ 2, ոչ Քէ 3 Ժամ այլ Օրուան 24 Ժամերը**

**Շարաքը 7 օր անվնար**  
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ


**Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400**

\*\*\*\*\*

**The Armenian Teletime Is Back On Channel 18**  
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day  
**7 Days Per Week, Free**  
No Subscription Fee - Plus 40 Additional Channels  
For info call The Armenian Channel (818) 982-2400



# Դիմեցէ՛ք ԲԺ. Դաւիթ Դաւթեանին



**ԲԺ. Դաւիթ Դաւթեանը կը սեպուի LAPBAND-ի լաւագոյն մասնագէտ ռահվիրան որն ունի եզակի փորձարութիւնը եւ՝ իբրեւ մասնագէտ եւ՝ իբրեւ LapBand կրող անձ:**

David G. Davtyan M.D., FACS, FICS,  
Board Certified - American Board of Surgery, American Board of Bariatric Medicine  
American Society for Metabolic and Bariatric Surgeons

*110 Ֆունդ կշիռը  
կորսցնելն վերջ սկսեցի  
ինքզինքս բոլորովին  
նոր անձ մը տեսնալ:  
LapBand-ը եղաւ  
կեանքիս փրկութիւնը:  
– Տանիս Պ.*



*114 Ֆունդ կշիռ կորսցնլը եւ հագուարեղենի  
22 չափէն 4 չափին իջնալը, կեանքիս ամենէն  
յանկի երևոյթներէն մին եղամ է, ԲԱՅՅ  
միայն մէկ արհեստանք ունիմ՝ երանի ակի  
կանուխէն LapBand ըլլայի:  
– Ռիմա Բ.*

### Յիշեցէ՛ք՝

Եթէ հոգնած էք նիհարնալու միջոցներ փորձելէն եւ որոնելէն  
Եթէ հոգնած էք չնիհարնալու յուսախաբույթնէն  
Եթէ կ'ուզէք՝ ՆԻՏԱՐՆԱԼ ԱՐԱԳ եւ ԸՆԴՄԻՇՏ  
Եթէ կ'ուզէք՝ ըլլալ ԱՌՈՂՁ եւ ԳԵՂԵՅԻԿ  
Դիմեցէ՛ք ԲԺ. Դաւիթ Դաւթեանին



BEVERLY HILLS OFFICE  
11847 Wilshire Blvd., Suite 200  
Los Angeles, CA 90025  
(310) 500-3750

GLENDALE OFFICE  
1141 N. Brand Blvd., Suite 300  
Glendale, CA 91202  
(818) 546-1500

[www.LapBandLA.com](http://www.LapBandLA.com)  
[www.NewHopeToday.com](http://www.NewHopeToday.com)  
Info@NewHopeToday.com



# ԴԵՊԻ ՇԵԹԱՆՈՍ ՈՒ ՔԻՐԱՏՈՆԵԱՅ ՏԱՃԱՐՆԵՐ

**ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ**  
(Շարունակումս ընդհատված է)

Ճանապարհին Գեղարդին է լերան լանջին փռուել: Փայտէ ձկուած յենակները հազիւ էին կարողացել խնձորենիների կթած թեւերը պահել, կարծես փլուում էին: Արեւն էր իր կրակ լոյսով իջել նրանց վրայ, որոնք նրա հուրից շիկնած ժպտում էին: Ինձ ուղեկցող Գրիշան կանչում էր ծիրան, իսկապէս դոյլում ծիրան էր, մանր, սակայն իսկական կրակափայլ ծիրան: Ապշած նայում էի ծիրաններին, աշնանը ծիրան որտեղից, ինչպէս պիտի ասէր «Տէր ու Մանան» վիպակի թաթոս աղայի կինը «Այս աշնանը կկու որտեղից»: Իսկ շինականը ժպտում էր, բացատրում որ իրենց պարտէզներում Սեպտեմբերին հասնող ծիրան կայ, քաղաքից այստեղ են գալիս ծիրան ուտելու: Ուր էք գնացել ասում էր, գործարան չկայ, սակայն հող կայ, խնամիր նրան, ջերմացրու քրտինքով, մայրութիւն կ'անի քեզ, կը կերակրի քու մանչերին:

Երբ բլուրի գագաթին էինք, մեր առջեւ փռուել էր ընդարձակ շէն, պարտէզ, որտեղ ծառերը իրենց ափերի վրայ պահել էին տները: Իսկ այնտեղ ձորի պուտակին չաղթ կանգնել էր սիւնաշրերով տանիքը պահած մեր նախնիների հեթանոս տաճարը, Գառնին է այն: Գառնի գիւղում ենք, որին մինչեւ 1935 թուականները Բաշ-Գառնի էին անուանել: Գեղամայ լեռնաշղթայի Գեղասար գագաթի լանջերն էին գրկել նրան: 1679 թուականի երկրաշարժը աւերել ու ամացրած էր եղել նաեւ գիւղը:

Գառնեցի Մարտիրոսը որպէս վաշտապետ նակիրում մասնակցած էր եղել Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան մարտերին եւ առաջինը որպէս ռուսական զորքի առաջապահ մտել Մուշ, պարզեւատրուած եղել Գեորգեան 1,2,3րդ աստիճանների շքանշաններով: Մասնակցել էր նաեւ Բաշ-Ապարանի ճակատամարտին եւ վճռական դերակատարութիւն ունեցել Հայաստանը թրքական տարրերից մաքրելու գործին: Մարտիրոսի թոռ գառնեցի Դերենիկը (Ատոմ) իր պապի մարտական ոգու հուրը սրտում մասնակցել է Արցախի ազատագրական կռիւների... ամսուս զոհուել է:

Բերդի քարէ կամարակապ դարպասով ներս ենք մտնում, կարծես այստեղից անցած հայոց արքաների, իշխանների, նախարար-

ների լոյսին աղօթքը, տաճարի քուրմերի ոգու հուրն է իջնում սրտիս, ափսոս որ ինձ շնորհուած լինելութեան ընթացքում ես գիւնուոր չեղայ հայոց կուռին, ինչպէս իմ տասնութ տարեկան լեզէոնական Արմենակ հայրս կամաւորագրուել էր նրան եւ գէնք շաչել թշնամուն:

Գառնի ամրոց, ըստ 16րդ դարի մի ձեռագրի, այն հիմնադրուել է մ.թ.ա. 2166 թուականին: Իսկ Հայոց Պատմահայր Խորենացին վկայել է, որ այն հիմնադրած է եղել Հայկ Նահապետի թոռ Ամասիայի որդի Գեղամը, որի թոռ Գառնիկի անունով անուանուել էր Գառնի: Սակայն ըստ այլ վկայութիւնների այն հիմնադրուած է եղել մ.թ.ա. երրորդ դարում, որին աւերել էին հռոմէացիները: Առաջին դարի եօթանասուն եօթ թուականին այն վերաշինել է Արշակունիների հարստութեան հիմնադիր՝ Տրդատ Ա. Արշակունի թագաւորը: Տրդատ Գ.ի Մեծի, գահակալութեան տարիներին ամրոցի տարածքում կառուցուել են նոր շինութիւններ, որոնցից գունաւոր խճաքանդակ բաղնիքը: Մինչեւ Արշակունեաց հարստութեան անկումը՝ 428 թ. Գառնին եղել է արքունական ամառանոց, որը յետագայում որպէս անմատչելի զորակայան անցել է Զաքարեան, Պռոշեան իշխանական տներին եւ թաւալուծութեանը: Հայկազուն Արտաշէսեանների, եւ Արշակունիների օրօք նաեւ այն եղել է զորակայան:

16-17րդ դարերին Գառնի բնակավայրը ենթարկուել է թուրք ու մոնղոլ-թաթարների ասպատակութիւնների: 17րդ դարում պարսից Շահ Աբաս Ա.ի հրամանով տեղահանուել էր նաեւ Գառնիի բնակչութիւնը, իսկ 1638 թ. այն աւերուում ու ամայացուում է թաթարական զնդերի կողմից: Ամրոցը քանդուել է 1679 թուականի երկրաշարժից: 1828-30 թուականների ռուս-պարսկական պատերազմից, Մակուց գաղթած եւ Դաւալու - այժմեան Արարատ քաղաք - հաստատուած անհնազանդ բնակիչներին ցարական իշխանութիւնները աքսորել էին անմարդաբնակ Գառնի, որտեղ յետագայում բնակութիւն էին հաստատած եղել նաեւ այլ բնակավայրերի բնակիչներ, հիմք հանդիսանալով ներկայիս բնիկ համարուող տոհմերին:

Իմ նախնիների արիական ոգին գրկած, ակներս նրա լոյսով վառուած քայլում եմ դէպի սիւնազարդ

լուսայրոյ մեհեան, այն մութ խուց է, այնտեղ արեւ է, լոյս է: Արեւի, լոյսի արդարութեան, ճշմարտութեան Միհր հաստուծոյ տաճարն է այն, հազարամեակներ առաջ արմէնները նրա պաշտամունքն էին արարել, Պահլաւները տարել էին այն իրենց երկրում ճշմարտութիւն ճառագելու: Արմէնների տիեզերական բազում հեթանոս տաճարներից միակ կանգուն մնացել էր Միհրի տաճարը, աւերուել էր հազար վեցհարիւրականների երկրաշարժից: Գրիգոր դարձած Սուրէնը այն չէր կործանել, յունական եփեսոսի տաճարի արտաքին տեսքին նման եղած լինելու պատճառով: Սակայն հայ իմաստուն գիտնական, բանաստեղծ՝ Արթուր Արմէնը, իր խոհուն մտքով թափանցելով տաճարի ստեղծագործութեան խորհուրդին, եզրակացրել է որ նրա կառուցուած քային բազադարմասերը՝ սիւներ, աստիճաններ, հարթակներ, քանդակներ ներկայացնում են տիեզերական համակարգի կառուցը:

Արեւազալին Միհրն է իջնում իր լոյսով ատրուշանի կրակը վառելու: Բարձրանում եմ նրա քարէ աստիճաններով, գրկում սիւները որ հայոց հին աստուածների իմաստութեան խորհուրդը հոսի սրտիս: Գնում են ատրուշան, մոխիր եմ ափով վերցնում, որ կրակ փնռեմ այնտեղ, որ նրա ոգու ջերմով հոգիս այրեմ իմ նախնիների հաւատքով: Ակներս գոցում եմ որ գրկեմ բնութեան պաշտամունքին, արեւին, լոյսին այստեղ աղօթած բնապաշտ քուրմերին: Գրկում եմ լոյսից շիկացած ատրուշանի քարերը, աղօթում բնութեան արարչութեանը, հայոց հողի յաւերժութեանը: Այդ ինչպէս եղաւ, որ հազարամեակներ լոյսին, ուժին, կեանքի փառաբանմանը, բնութեան արարչութեանը աղօթող արիացին լքեց իր հին աստուածների իմաստութիւնը, խաւարեց իր հոգում ուժի պաշտամունքը եւ տանուլ տուեց իր հողը եւ միայն շնորհիւ իր լեռներում իջած տիեզերական կենսութիւն շարունակում է ճեմել մոլորակի պատմութեան ճամբաներին: Եւ իրենց արիական ցեղի սրտի արեան կանչով տղաներ, այս մեհեանի հրապարակում տօնախմբում են իրենց նախնիների կենսատու լոյսի, մաքրութեան, բարութեան, ճշմարտութեան արեգակ աստուած՝ Միհրի լոյսի փառաբանումը: Պատերազմի, քաջութեան ու չաղթանակի աստուած Վահագնի՝ բոցեղէն ծնունդը: Մայրութեան, զգաստութեան, պտղաբերութեան, արգասաւորման աստուած Անահիտի մայրացման գարունը, հայոց սիրոյ եւ գեղեց-

կութեան ու Վահագնի սիրուհի Աստղիկի՝ սիրոյ դիւթանքը: Իմաստութեան եւ ողջախոհութեան դիցուհի Նանէի՝ հողի, տան, ծուխ ծխանիի ոգու գովերգումը:

Դպրութեան, պերճախօսութեան, գիտութիւնների ու արուեստների, աստուածների ատենադպիր, մարդկանց ճակատագրերի գուշակող ու երագների մեկնաբան եւ նրանց չարի ու բարիի գործերը արձանագրող աստուած Տիրի՝ արուեստների ու դպրութեան տօնախմբութիւնը: Հիւրընկալութեան աստուած Վանատուրն էր իր հիւղականների դռները բացած կանչում անցորդներին, Նար Մովինարն էր ի նշան մաքրութեան ջուր ցանում անցորդների վրայ: Արի, իմաստուն, ամենագոր Արամագղն է իր դուստրեր՝ Անահիտի, Աստղիկի, Նանէի, Նար Մովինարի, որդիների՝ Վահագնի, Միհրի, Բարշամիւնի, Սարտարամետի, Վանատուրի, Տիրի հետ տաճարի աստիճաններից իջնում տիեզերական պաշտամունքի իմաստութիւնը ցողելու հայրի սրտերին, հայոց հողին, ցնծում է հրապարակը, կարմիր հրճուանք է այնտեղ, երգում են Վահագնի ծնունդը, իրենց աստուածների փառաբանման գողթան երգերը:

Հազար տարիներ յետոյ էլ հայոց սրտերում չչանգաւ իրենց մայրութեան աստուածուհի՝ Անահիտի պաշտամունքը եւ նոր հաւատքի սրբացած իմաստուններ՝ Նարեկացի, Շնորհալի արեւազալին, մալր դիցուհի Անահիտի փառաբանմանը շարականներ էին յօրինել: Տաճարի սիւները գրկած հայ նոր քուրմեր արեւազալի ու Անահիտին ձօնուած շարականներն էին խմբերգում, ժողովուրդն էր ձայնակցում, ձորն ու լեռներն էին արձագանգում, ուր ես հասել Արմէն-Հայ, առի քու հին ու նոր տաճարներ, որ քու ցեղի սրտին նրանց օրհնութիւնը հոսի: Պահլաւը, պարսիկը, հինտուն իրենց երկիր տարան քու աստուածներին, իսկ դու սպաննեցիր նրանց, կործանեցիր նրանց մեհեանները, ուրացար քու հին տոհմի հաւատքը եւ տանուլ տուեցիր քեզ ու քու օրրանը:

Այս տաճարը կառուցել է առաջին դարի երկրորդ կէսին (77 թուականին) ամրոցի վերակառուցման շրջանում: Եղել է Տրդատ Գ թագաւորի քրոջ՝ Սոսրովադուխտի ամառանոցային սենեակը, կործանուել է 1679 թուականին երկրաշարժի ժամանակ: 1909-1911 թուականներին Մառը պեղումներ է արել ու բացել տաճարի աւերակները: 1959-1974 թուականներին

Շարք էջ 17

MERO ENTERTAINMENT GROUP INC. PRESENTS

THE EVENT OF THE YEAR

FEATURING THE STAR OF ARABIC TRADITIONAL MUSIC

**WADIH MRAD**

صوت الطرب الأصيل

**المطرب وديع مراد**

حفل واحد في تونس أنجلوس فقط

مازات وماكولات لبنانية مميزة

**SATURDAY JANUARY 5, 2008**

For Reservations Call: (818) 276-7567 Location: 740 E. Washington Blvd. Pasadena CA 91104



# ՄԻ ԸԱԶՈՒԱԳԻՏ, ԱԶՆՈՒԱԿԱՆ-ԳՈՂՏՐԻԿ ԵՐԵԿՈՅ «ՄՏԱՐԱ» ԹԱՏՐՈՆԻ ՍՐԱՇՈՒՄ...

## ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայ հասարակութիւնը վերջին տարիներին այնքան է հեռացել «ագնուական» հասկացողութիւնից, որ գրեթէ այդ գեղեցիկ բառը ի սպառ վերացել է գործածութիւնից:

Վերջերս, մի գեղեցիկ, ինքնատիպ երեկոյ, որը նուիրուած էր հանրաճանաչ սիրուած երգչուհի Նարինէ Շահբազեանի ստեղծագործական, բեմական գործունէութեան 30-ամեակին, ներկաների վրայ թողեց անջնջելի, նաեւ հաճելի սպառնալից թիւն:

Սրահի մուտքի մօտ իւրաքանչիւրին դիմաւորում էին անսովոր անակնկալով շամպայնի գաւաթով, իսկ կանանց նաեւ թարմ ծաղիկներով: Նարինէն, իր ընտանիքով այնքան մանրակրկիտ ճաշակով էր նախապատրաստել երեկոն, որ նոյնիսկ վերափոխուել էր հանրայայտ ասացուածքը, «Թատրոնը սկսում է հանդերձարանից» այդ օրը «Թատրոնը սկսում էր նախաշնչից-մուտքից...: Ասեմ նաեւ որ ներկաները կարող էին իրենց ճաշատեսակներով հարուստ սեղան լրացնել տարբեր խմիչքներով, որի օգտագործումից սրահում, բնականաբար մթնոլորտը չափից դուրս ջերմ էր:

Ի լրումն ամէնի, Նարինէ ոգեւորուած 3-4 ժամ շարունակաբար դահլիճին ներարկեց այնպիսի լարուածութիւն եւ ուրախ տրամադրութիւն, որ անընդհար ծափահարութիւն ու բացականչութիւններով էին ընդունում տաղանդաւոր երգուչուհու բոլոր կատարումները, կատակները, որոնք վկայում էին երգչուհու նկատմամբ հանդիսականների սէրն ու անկեղծ երախտագիտութիւնը:

Անկրկնելի երեկոն չաջողութեամբ կայացաւ: Այսպիսով յոբելիանական երեկոյ-ճաշկերոյթ-համերգը անձամբ կազմակերպել էր Նարինէ Շահբազեանը իր ընտանիքով, ինքը նշում էր իր գործունէութեան 30-ամեակը: Լաւ է թէ՛ վատ: Այս հարցը ինձ բազմաթիւ մտահոգութիւնների առիթ տուեց, որից ծնուել է այս փոքրիկ ակնարկը:

Ճիշտ է որ վերջին 20 տարիներին ընթացքում դեռեւս լինում են առանձին դէպքեր, երբ արուեստագէտները արժանանում են պետութեան, հասարակութեան գնահատանքին, նշում են նրանց յոբելիանական տարեթուերը, սակայն եւ ոչ բոլորինը... Առաձն ասում է. «սերովին տէրն է տարել, անտէրին՝ գեղջ» կոպիտ է, բայց ճշմարիտ: Եւ այս ամէնը գալիս է մայր հայրենիքից: Ինչ է ցուցադրում ՀՀ հեռուստատեսութիւնը իր «Ռոբիկոն»ի պրեմիերաներով ու անարժէք տեսաժապաւէններով, ձայներիզներով, որոնց մեծամասնութիւնը կատարումից յետոյ մոռացւում ու ասպարէզից դուրս են գալիս... Կամ հեռուստատեսութեամբ ցուցադրում են Նաուայի զգեստապահարանը, Յասմիկի ման-

կապարտէզն ու դպրոցը, ոմանց վարսավիրանոցը, խանութը, ուր գնումներ են կատարում, պարֆումերիա գնում եւ էլի շատ անհեթեթութիւններ... Դրան գուգահեռ երեւանի փողոցներում երիտասարդների հարցումների ժամանակ համատարած անտեղեակութիւն մեր արուեստի մեծերի նկատմամբ: Մի հաղորդման ժամանակ 2-3 երիտասարդների հաղորդավարը հարցնում է, թէ ո՞վ է Աւետ Աւետիսեանը, երիտասարդները մի քիչ մտածելուց յետոյ պատասխանում են, հաստատ չգիտենք, բայց հաւանաբար պառլամենտի դեպուտատ է...

Հայ ժողովուրդը հպարտ է գիտութեան, մշակոյթի, արուեստի մեծերով, եւ նրանց մոռանալով մենք կորցնում ենք լիչողութիւնը մեր պատմութեան նկատմամբ:

Վերջապէս Նարինէ Շահբազեանը, որը 30 տարի անմնացորդ իր երգը, հոգին ու կարողութիւնները շուրջընդհանրում է հասարակութեանը, իր երկրպագուներին, տատիկներին, պապիկներին, մամիկներին, չի արժանացել նրանց գնահատանքին, որ այդ յոբելիանը կազմակերպուելու ու անցկացուելու հասարակութեան կողմից ի նշան մեծ շնորհակալութիւն ու գնահատանքի տաղանդաւոր երգչուհու գործունէութեանը:

Այսքանը ասպագայում խորհելու համար: Նարինէ Շահբազեանը ոչ ոքի չի մոռացել իր համերգները նուիրել է մայրերի, հայրերի, երեխաների սոնական օրերի առթիւ, կազմակերպել է համերգներ ծնողազուրկ, ֆիզիքական թերութիւններով երեխաներին նուիրատուութիւններ է կատարել Հայաստանի որոշ մանկատներին: Իսկ Սեպտեմբերի 11ին տեւորիստների կողմից կատարուած ոճրագործութեան զոհերի լիչատակին նուիրուած խոշոր միջոցառում համերգը իր բազմաբովանդակ մտահարողութեամբ ցնցեց ներկաներին:

Նարինէ Շահբազեանը լիրակի տաղանդաւոր է, նա իր երգերով գերում է ունկնդիրներին մերթ թախիծ, մերթ ուրախութիւն եւ պարային տրամադրութիւն ստեղծելով նրանց մօտ: Անչափ շատ են Նարինէի երգի սիրահարները, Նարինէի համար յատուկ երգեր են գրել այլազգի բազմաթիւ ճանաչուած կոմպոզիտորներ:

Յուսանք որ Նարինէն դեռ երկար ժամանակ կ'ուրախացնի իր ունկնդիրներին նոր, գեղեցիկ ստեղծագործութիւններով:

Սիրելի Նարինէ, թոյլ տուր քո բազմաթիւ երկրպագուների անունից յատուկ շնորհաւորել քո բեմական գործունէութեան 30 ամեակի առթիւ եւ այն թող ուղեկցուի բազմահարկ երգասէրների անկեղծ, բարի մաղթանքներով ու շնորհաւորանքներով յառաջիկայ ամառորի եւ սուրբ ծնունդի առթիւ:

## «ՄԱՅՐ ԸԱՅԱՍՏԱՆ»

«Մայր Հայաստան» ըսելով կը հասկնանք՝ էրգրում, վան, Մուշ, Սասուն եւ Պիթլիս:

Ո՞վ կործանեց Մայր Հայաստանը.

Թուրքերը: Ոչ:

Քիւրտերը: Ոչ:

Ուրեմն ո՞վ:

Բիւզանդիոնի յոյն կայսրերը:

Քրիստոսէ ետք 1000 թուականին, շուրջ վեց միլիոն էր հայ ժողովուրդը:

Բիւզանդական կայսրութիւնը սկսաւ 395 թ. մինչեւ 1453:

Բիւզանդական կայսրութիւնը Փոքր Ասիոյ մեծ մասին կ'իշխէր: Անկէ անդին կային հայերը.

Բիւզանդական կայսրութեան հիւսիսը կար Սեւ Մովը, հարաւը՝ Միջերկրական Մովը, արեւմուտքը՝ Քրիստոնեայ Եւրոպան: Ապահով էին: Արեւելքի մէջ ալ կար վեց միլիոն ժողովուրդով հուժկու Հայաստանը: Յոյներուն դիրքը հայոց հանդէպ, հայ երիտասարդները բանակի մէջ առնել, իսկ ընտանիքները տեղաւորել կայսրութեան ամէն կողմերը: 578 թ. 10,000 հայ ընտանիքներ Կիպրոս տեղաւորեցին: 602 թ., Մորիս կայսրը հրամայեց 30,000 հայ ընտանիքներ Թրակիա տեղաւորեն: Բարեբախտաբար, հրամանը գործադրուել է առաջ ինք գահընկեց եղաւ: Յետագայ դարերուն հազարաւոր հայ ընտանիքները տեղաւորուեցին Սիսիլի, Սփարթա, Քալպարիա, Կրեստէ, Մակեդոնիա, եւ այլ գաւառներ: Մեզ կործանելով, յոյները թուրքերը բերին Փոքր Ասիա:

Հայերը այնքան շատցան յունաց կայսրութեան գաւառները, որ դարերու ընթացքին յունացած հայերը Բիւզանդիոնի գահին տուին 18 կայսրեր եւ 9 կայսրուհիներ:

1042 թ., յունաց Միքայէլ Քալաֆատէս կայսրը երկու անգամ յարձակեցաւ Անի քաղաքի Բագրատունեաց Հարստութեան պարիսպներուն վրայ: Սակայն հայոց վահրամ Պահլաւունի զօրավարը շախմատեց յունաց զօրքերը:

Ինչու այս թշնամութիւնը հայոց հանդէպ: Յոյները կ'ուզէին որ հայերը լքեն իրենց եկեղեցական վարդապետութիւնները եւ հետեւին յունաց եկեղեցույ:

Պատերազմի դաշտին վրայ էր ձախողեցան, յունաց Մոնոմաքոս կայսրը հրաւիրեց Բագրատունեաց Հարստութեան 18 տարեկան Գագիկ Բ. թագաւորը որ Կ. Պոլիս երթայ, խորհրդակցելու համար: Գագիկ Բ. մերժեց երթալ, որովհետեւ կը կասկածէր կայսրին վրայ: Սակայն, Հայոց Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը եւ Վեստ-Սարգիս իշխանը, երկուքն ալ կայսրին գործակալները, համոզեցին երիտասարդ թագաւորը որ երթայ Պոլիս: գագիկ Բ. գնաց Պոլիս բայց չվերադարձաւ: Յոյները սպաննեցին վան քաղաքի Սենեքերիմ թագաւորին երկու մանչերը, ինչպէս նաեւ Կարս քաղաքի Գագիկ թագաւորը: Գալով Բագրատունեաց Գագիկ Բ. թագաւորին, յոյն իշխան մը իր դղեակի պատնէշին վրայ կախաղան հանեց 1079 թուականին:

Այսպէս, Բիւզանդիոնի յոյն կայսրերը կործանեցին Մայր Հայաստանը, ինչպէս նաեւ Անի քաղաքին Բագրատունեաց Տունը, յոյսը հայ ազգին:

Մայր Հայաստանը կործանելով, Բիւզանդիոնի յոյն կայսրերը ճամբայ բացին որ Ալի Արսլանի Սելճուք թուրքերը գան Կ. Պոլիս 1453ին, եւ զլիսատեն յունաց մեծերը, ինչպէս նաեւ Այա Սոֆիա շքեղ տաճարն ալ վերածեցին մզկիթի, իրենց ձիերը տաճարի բեմին վրայ հանելէ ետք:

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

# ՎԱՐՁՈՒ ՍՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

(200 ԴՈԳԻ ԸԱՍԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA  
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

massis2@earthlink.net



ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՅԱՍԸ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԼԱԲԱԳՈՅՆ ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻԿՆ Է

Միջին քաշում IBF-ի վարկածով աշխարհի ախոյեան Արթուր Աբրահամը երկրորդ անգամ անընդմեջ ճանաչուել է Գերմանիայի լաւագոյն բռնցքամարտիկ: Այսպիսին են գերմանական «Box Sport» ամսագրի հարցման արդիւնքները: Աբրահամը վաստակեց 886 միւսուր՝ 286-ով առաջ անցնելով գերմանացի քաշային կարգում IBF-ի ախոյեան Վլադիմիր Կլիչկոյից: Յաջորդ տեղերում են Զոլթ Էրզեհին, Ֆելիքս Շտուրմը եւ Սեբաստիան Սիլվեստրը:



«Այն բանից յետոյ, երբ էրիսոն Միրանդայի հետ մենամարտում կտրեցի ծնոտս, չէի պատկերացնում, թէ ինչպիսին կը լինի վերադարձս ուրիշ: Սակայն աշխարհի ախոյեանի տիտղոսի երեք քաջող պաշտպանութիւնները 2007-ն ինձ համար յաջողակ տարի դարձրին: Այս մրցանակով հիանալի եզրափակուեց տարին: Առիթից օգտուելով, ցանկանում եմ շնորհակալութիւնս յայտնել գերմանացի երկրպագուներին ինձ աջակցելու համար», նշել է Արթուր Աբրահամը: Արթուրի մարզիչ Ուլի Վեգները ճանաչուել է տարուայ լաւագոյն մարզիչ: Նա արդէն 5-րդ անգամ է նման պատուի արժանանում: «Շատ մեծ պատիւ է 5-րդ անգամ անընդմեջ լաւագոյն մարզիչ ճանաչուել: Այս մրցանակը ինձ համար կարեւոր նշանակութիւն ունի, քանի որ մրցակցութիւնը զգալիօրէն աճել է: Ուրախ եմ, որ գերմանացի մարզասէրները բարձր են գնահատել աշխատանքս», նշել է Վեգները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ 2007Թ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՄ ՆՈՒԱԾԵԼ ԵՆ 104 ՄԵՏԱԼ

Հայաստանի մարզիկները 2007թ.աւանտիւր նուաճել են 104 մետալ բոլոր տարիքային կարգերում տեղի ունեցած միջազգային մրցումներում: Ինչպէս այսօր մամուլի ասուլիսում տեղեկացրել է ՀՀ սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարար Արմէն Գրիգորեանը, աւելի քան 5000 մարզիկներ մասնակցել են հարիւրաւոր մրցումների, այդ թուում՝ աշխարհի, Եւրոպայի, ՀՀ 78 առաջնութիւնների:

2008 թուականի օլիմպիական խաղերին Հայաստանի 12 մարզիկներ արդեն նուաճել են օլիմպիական վարկանիշ, ենթադրուում է, որ ընդհանուր առմամբ եւս 10-12 մարզիկներ կը միանան նրանց:

Merrill Lynch INVESTMENT BANKING JACK KALANJIAN Professional Financial Advisor Corporate Center Pasadena 225 So. Lake Avenue Pasadena, CA 91101 (626) 396-2825 Direct (626) 376-4665 Fax jack\_kalanjian@ml.com "Helping the Armenian Community Build Wealth"

«ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ» ԸՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ԲՐԵՍԵՆՈԱ) ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00 Կլէնտոյլի 26-րդ կայանից

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՆԳՂԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes Arsenal, Tottenham, Liverpool, etc.



Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Lists top performing teams like Arsenal, Tottenham, Liverpool.

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes Fiorentina, Lazio, Juventus, etc.



Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Lists top performing teams like Fiorentina, Lazio, Juventus.

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team names and scores. Includes Real Madrid, Barcelona, Atletico, etc.



Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Lists top performing teams like Real Madrid, Barcelona, Atletico.

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 19-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team names and scores. Includes Lyon, Marseille, Monaco, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Lists top performing teams like Lyon, Marseille, Monaco.



### ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳՈՅԱՏԵԽՄԱՆ ՀԱՐՑԸ ՈՂՁ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆ Է

Շարունակում է 5-էն

Լոր՝ իրապատու Սուքիասեանի, Գիւմրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերութեան սեփականատէր՝ Վահան իրապատեանի եւ թիմի, «Սարգիս Տիրուհի» ուսանողական Միութեան ատենապետ՝ Նարեկ Գալստեանի եւ ուրիշների վրայ: Հայրենիքի կործանման եզրին հասցրած Հայաստանի ներկայ իշխանութիւնը այլեւս տեղ չունի մեր ժողովրդի մէջ եւ գիտակցելով իր կատարած վնասակար արարքները հայրենիքի ու հայ ժողովրդի նկատմամբ, պէտք է իր կամքով հեռանայ իշխանութիւնից, տեղը զիջելով արդար ընտրութիւններով ընտրուած նախագահին:

Լոսանճելոսահայ համայնքի արդար ընտրութիւններին հաւատացողները դիմելով հայ ժողովուրդին, կոչ են անում սթափուել թմբիրից, թօթափել ներկայ իշխանութիւնների ներարկած վախը եւ նեցուկ կանգնել անկախ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութեանը՝ վստահ հաւատալով, որ միայն նա կարող է դուրս բերել երկիրը ճահճացած վիճակից իր փորձարութեամբ եւ դիւանագիտութեամբ:

Նախագահական ընտրութիւններում Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութեանը աստարող լոսանճելոսահայ մտաւորականներ, արուեստագէտներ, գործարարներ եւ հայրենիքի ցաւով տառապողներ:

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԱՆՔ

Գաղութի ծանօթ մտաւորականներէն եւ «Մասիս»ի աշխատակից՝ Փրոֆ. Դոկտ. Գէորգ Խրլոբեան վերջերս ենթարկուած է վիրաբուժական գործողութեան մը եւ այժմ տուն վերադառնալով կը բոլորէ ապաքինման շրջան մը: Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք իրեն:

«Մասիս»

### ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ Վ Ի Գ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ի նպաստ Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին

Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350  
Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոնս Հայաստան  
Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ  
Գ. Պարգել՝ 42" Plasma TV

Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. ժամը 8:00ին Verdugo Hills Country Club  
400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202  
Նոր Հաճըն Բաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով Նուէր՝ \$100  
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝ (626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

### ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսարուժութեան կեդրոն դեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի Փաստփնայի մէջ Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը 3:00  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E Pasadena CA 91104  
Հեռախօս (818) 434-8118  
միայն ժամադրութեամբ

- «Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.
- Մարմնային բռնիկ հիւանդութիւններ, արեան գերմնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալիւ, քմրադեղեր, եւայլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհետքիւն, եւայլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:
- Ուսումնական եւ սրբօրային բարելաւում

### ԼԵԶՈՒԱԿԱՆ ԳԵԼՍՈՒՊԵՐԴՈՒՔԵԱՆ ՍԸ

Շարունակում է 7-էն

դուքյան տեսակ մը գիւղական գերվաճառանոց մըն է:

Վերջացնելու համար այս ակնարկը, ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրեմ մի քանի հազուագիւտ բառերուն եւս, ակրաստ/ակրատ - թեթեւ նախաճաշ, որ առտուայ ժամը 10ին կ'ուտուէր, եւ ալուգրա, որ կրնայ մեր գործածած «գետնախնձոր»ին տե-

### ՈԱՅԿ-Ը 2007 ԹՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԵՑ ՆՈՐ ՏԱՐԵԳՐԵՈՎ

Շարունակում է 7-էն

ուածների շարքը: Տնտեսագիտութեան դոկտորներ Թաթուլ Մանասրեանի, Զոյա Թաղեհոսեանի, վերլուծաբաններ Յովսէփ Խուրշուդեանի, Արամ Յարութիւնեանի, Թաթուլ Յակոբեանի, Դաւիթ Պետրոսեանի, Սիւզաննա Բարսեղեանի արծարծած թեմաները վերաբերում են մասնաւորապէս Լաւրաբաղեան հիմնախնդրի կարգաւորմանը, Կարս-Ախալքալաք երկաթուղու շինարարութեան ծրագրի, տարածաշրջանային հնարաւոր գարգացումների, Հայաստանի արտաքին քաղաքականութեան հետ կապուած հարցերին, անմիջական հարեւան երկրների հետ յարաբերութիւնների բնականոնացման ուղիներին, Հայաստանի տնտեսութեան առանձնապատկութիւններին, ՀՀ դրամի արժեւորման սոցիալ-տնտեսական հետեւանքներին ու ԱՄՆ դոլարի արժեզրկման քաղաքական շահարկումներին, ինչպէս նաեւ Հայաստանում ժողովրդագրական իրավիճակին: Գիրքը

ղը առնել Հայաստան, եթէ ժողովուրդը ձեռք քաշէ «կարտոֆիլ» եւ կամ «ֆրի» (french fries) բառերէն: Թէ ինչո՞ւ գետնախնձոր բառը չեն գործածեր, պատճառը այն է, թէ ուրիշ բոյսի անուն է - մորմազգիների կարգին պատկանող՝ հատապտուղ ունեցող բոյս, մանուշակագոյն եւ ճերմակ ծառիկներով եւ բազմասերմ՝ կեռասի մեծութեամբ կանաչ պտուղներով: (Մալխասեան, I, 425):

եզրափակում է կենտրոնի աշակիցների լիակազմ անուանացանկը:

Իրենց ելույթներում Ազգային ժողովի պատգամաւոր Ստյոպա Մաֆարեանը եւ միւսները բարձր գնահատեցին ժողովածուի թեմատիկ հրատապութիւնը, հարցադրումների արդիականութիւնն ու նիւթի մատուցման ուրոյն ոճը: Գրքի հեղինակներից Մանասրեանը, Պետրոսեանը եւ Յարութիւնեանը ներկայացրին իրենց աշխատութիւնների հիմնական գաղափարական ուղեւիշներն ու յետագայի ծրագրերը: Ներկաները եւս մէկ անգամ շեշտեցին տարեգրքի արժանիքները, նոր յաջողութիւններ մաղթեցին ժողովածուի ստեղծագործական անձնակազմին:

Գիրքը տպագրութեան է պատրաստուել ՌԱՀՀԿ աշխատակիցների անմիջական ջանքերով: Գլխաւոր խմբագիրն է Գէորգ Լալայեանը, ձեւաւորողը՝ Վահագն Վարդանեանը, խմբագրակազմում աշխատել են Կարապետ Կալենչեանը, Սիւզաննա Բարսեղեանը եւ Սայաթ Գուլումճեանը:

### ԴԵՊՈՒ ԸԵԹԱՆՈՍ ՈՒ ՔԻՐՍՏՈՆԵԱՅ ՏԱՃԱՐՆԵՐ

Շարունակում է 16-էն

վերականգնուել է նրա սկզբնական տեսքը, որի ճարտարապետն է եղել Սահինեանը:

Հեթանոս՝ այլադաւան, նախաքրիստոնէական ու ոչ Քրիստոնէական բազմաստուած կրօնների ընդհանուր անուանումն է, որը ասորական hitnos, hetnos բառերից է ծագել: Այն գիտական բովանդակութիւն չունի: Քրիստոնեայ հեղինակները հեթանոսութիւնը անմտօրէն որակելով որպէս վայրենիութիւն, անբարեացակամ վերաբերմունք են դրսեւորել նախաքրիստոնէական պաշտամունքների հանդէպ: Հայկական կրօնագիտութիւնը հայոց նախաքրիստոնէական մարդկերպ աստուածների կրօնը անուանել էր հեթանոսութիւն: Իսկ Աստուծոյ որդին՝ Քրիստոսը մարդ չէր, իսկ արդեօք Աստուած մարդը չէր ստեղծել իր իսկ պատկերով...:

Հեթանոսութիւն, այն մեր Արմէն նախնիների բնապաշտութեան «կրօնք»ն է եղել, որոնք հազարամեակներ փառաբանել էին բնութեան տիեզերական խորհուրդը, այն հայոց պատմութեան ու իմացութեան փառաւոր էջերն են, որի մեհեաններում իրենց արիական ցեղի մշակույթի իմաստաւորումն է արարուել: Եօղունջուզգի Հայկազուն-Տէր Աբրահամն է իմ հայրենի Մուսա Լեւրան այդ գիւղի Ս. Աստուածածած քարէ աւազանիկում, Պօղոս պապիս անունով, մկրտել ինձ որպէս Քրիստոնեայ հայ: Ոչ ոք իրաւունք չունի ինձ հեթանոս

կոչել իմ նախնիների պաշտամունքը հանդուրժելու, նրա խորհուրդը փառաբանելու, բնապաշտ լինելուս համար: Այն օտար երկրի վարդապետների, այլոց կրօն ք չէր եղել, հազարամեակներով Արրատացի, Նայիրիցի, Հայասագի, Արմիայի հայերի բնութեան պաշտամունքի տիեզերական հաւատամքն էր եղել: Այն վայրենի չէր, բնութեան առեղծուածներ՝ լոյսի, արեւի, երկնքի, կրակի, ջրի, ծառի, ծաղիկի, սիրոյ, մայրութեան, դպրութեան, հիւրընկալութեան, ուժի երկրպագութեան պաշտամունքն էր եղել: Եթէ օտար վարդապետի սիրոյ, խաղաղութեան նոր հաւատքը իր բնականոն տարածմամբ հասնէր հայոց աշխարհ, այն ընկալէին հանդուրժողբար եւ շարունակէին հանդուրժել նաեւ իրենց հին աստուածների իմաստութիւնը, ուժի պաշտամունքը, ապա հայն աշխարհը կը դիմաւորէր հոծ, փոքր ու մեծ Հայքերով, հայոց մատենները կը խօսէին: Հայոց «թագաւորը» այդ վարդապետը չէ, մեր Հայկ Նահապետն ու նրա ոգին է մեր թագաւորը: Ի՞նչ, է մինչեւ 301ը Արմէն-Հայ չէինք, ինչ է, հաւատքն է բնորոշում ազգի պատկանելիութիւնը, թէ ցեղի առեղծուածային ոգին եւ վասակ մի «Դաւաճան» չորջորջուած, արդեօք հաւատքից առաւել իր ազգի, ցեղի ոգու պաշտամունքի իմաստութեանը ու իր երկրի թագաւորութեան վերականգնմանը մտադրուած չէր եղել նա:

Իրենց սրտերում նախնիների

(Շարունակելի 2)



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ  
Proud Past



Լուսաշող Ապագայ  
Exciting Future

AGBU PASADENA CHAPTER

*Presents*

**New Year's eve gala**

*Monday, Dec. 31, 2007*  
*Pasadena Center*  
*8:00pm*

**SOLD OUT**

*Dinner catered by "La Fogata"*  
*DJ entertainment by "Heartbeat"*

*Please RSVP*  
*(626) 794-7942*  
*AGBU Center Pasadena • 2495 E. Mountain St. Pasadena*

<p><b>ADULTS CELEBRATION</b>          GYMNASIUM SEATING          DONATION \$100</p>	<p><b>TEEN'S CELEBRATION</b>          IN "BOYAJIAN HALL"          DONATION \$65</p>	<p><b>KIDS 12 &amp; UNDER CELEBRATION</b>          IN "BIG TENT"          DONATION \$30</p>
---	---	---